«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ն (այսուհետ ՄԲՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 17
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 34
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 39
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 42
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 45
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 48
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 52
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 57
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 58
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 59
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 61
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 63
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 63

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

ՄՈՒՀ-ը հիմնադրվել է 1996 թվականին՝ Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ: 2004 թվականին քոլեջի բազայի վրա ստեղծվել է բժշկական ինստիտուտ՝ ունենալով միայն մեկ՝ ստոմատոլոգիական ֆակուլտետ: Հետագայում՝ 2006 թվականին ինստիտուտում բացվել է նաև երկրորդ՝ դեղագիտական ֆակուլտետը: 2010/2011 ուս. տարում ընկերությունն անցել է երկաստիճան ուսուցման համակարգի՝ բակալավրիատ և մագիստրատուրա: ԿԳ նախարար 30.12.2015թ. N 1081-Ա/Ք հրամանով Մեհրաբյան բժշկական կրթօջախի բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ բժշկական ինստիտուտը, փակվեց և մնաց միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը՝ բժշկական քոլեջը: Քոլեջի գրանցման հասցեն ՀՀ ք. Երևան, Հր. Քոչարի 21, Կոմիտասի 51:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

ՄՈՒՀ-ը ներկայումս անցնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի երրորդ շրջափուլով: Նախորդ հավատարմագրման ավարտից հետո հաստատությունը մշակել է նոր ռազմավարական ծրագիր, որի առանցքային ուղղությունները ներառում են նյութատեխնիկական բազայի համալրումն ու արդիականացումը, միջազգային համագործակցության խորացումն ու գործընկերային ցանցի ընդլայնումը, ինչպես նաև կառավարման համակարգի կատարելագործումը: ՄԲՔ-ն իրականացնում է միջին մասնագիտական 6 բժշկական կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա», ինչպես նաև մեկ ծրագիր սպասարկման ոլորտում՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»:

2023-2024 ուսումնական տարում քոլեջում ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 351: 2020-2021-ից մինչև 2023-2024 ուսումնական տարիների ընթացքում ուսանողների թվի աճը կազմել է 118: Կրթական ծրագրերի իրականացման նպատակով քոլեջում դասավանդում են 44 դասախոս, որոնցից 43-ը բարձրագույն կրթություն ունեն, իսկ 1-ը՝ միջին մասնագիտական:

Քոլեջին տրամադրել էր խորհրդատվություն՝ քայլեր ձեռնարկելու դասախոսների փոխարինելիության ապահովման ուղղությամբ: Փորձագիտական խումբը նշում է, որ դիտարկվող կրթական ծրագրերում ընդհանուր և հատուկ մասնագիտական ցիկլերում ներգրավված դասախոսական կազմի թվային պատկերը հետևյալն է.

1. «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» ծրագրերում՝ 9 դասախոս, բոլորն էլ մասնագիտական կրթությամբ:
2. «Դեղագործություն» և «Բուժական կոսմետոլոգիա» ծրագրերում՝ 7 դասախոս, որոնցից 5-ը մասնագիտական կրթությամբ, իսկ 2-ը նաև հանդիսանում են գործատուներ:
3. «Ատամնատեխնիկական գործ» ծրագրում՝ 3 մասնագետ, որոնցից 2-ը գործատուներ են:

Շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2021 թվականին շրջանավարտների 91%-ը զբաղվել են աշխատանքով, որոնցից 75%-ը՝ իրենց մասնագիտությամբ:

2022 թվականին շրջանավարտների 75%-ը անցել են աշխատանքի, որոնցից 80%-ը՝ մասնագիտությամբ: 2023 թվականին շրջանավարտների 76%-ը աշխատանքի են անցել, և նրանց 85%-ը մասնագիտական գործունեություն է ծավալել ըստ ստացած կրթության[1]:

[1] Տվյալները վերցված են ՄՈՒՀ-ի կարիերայի բազայից

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ ՄԲՔ, ՄՈՒՀ կամ Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը:[2] Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը երկրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Առաջին հավատարմագրման գործընթացից հետո Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ընդհանուր զարգացման և կառավարչական որոշումների հիմքում եղել է 2021-2025թթ. ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ), որը մեծամասամբ ներառում է նաև նախորդ հավատարմագրման ընթացքում քոլեջին տրված խորհրդատվությունները: Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման արդյունքները՝ քոլեջը կատարել է բարելավումներ, մասնավորապես՝ ռազմավարական ուղղությունների հստակեցման, մասնագիտական կրթական ծրագրերի, ռեսուրսների և ենթակառուցվածքների շարունակական բարելավման, ոլորտային մասնագետների՝ որպես հրավիրյալ դասախոսների ներգրավման, ինչպես նաև ուսանողների համար հետազոտական աշխատանքի հնարավորությունների տրամադրման ուղղություններով:

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջը, լինելով մասնավոր ուսումնական հաստատություն, որոշակիորեն տարբերվում է իր կառավարման կառուցվածքով՝ պայմանավորված հիմնադիրների կողմից ղեկավարվող մոդելով: Տնօրենը քոլեջում միաժամանակ հանդես է գալիս որպես կառավարման բարձրագույն մարմնի՝ Հիմնադիրների խորհրդի, և Մանկավարժական խորհրդի նախագահ, ինչը ձևավորում է ուղղահայաց կառավարման մոտեցում:

Չնայած այն հանգամանքին, որ ղեկավար կազմի, մասնավորապես՝ տնօրենի կողմից դրսևորվում է որոշակի ճկունություն և ձեռնարկվում են քոլեջի զարգացմանը միտված նախաձեռնություններ՝ այդ թվում տարածքային բարեկարգումներ և ռեսուրսների ձեռքբերում, արտաքին գործընկերների ներգրավում և ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացում, անհրաժեշտ է արձանագրել, որ կառավարման գործող մոդելն ամբողջությամբ չի ապահովում շահակիցների հավասարաչափ մասնակցությունը կառավարման բոլոր մակարդակներում: Բացի այդ, կառավարման արդյունավետության գնահատման հստակ և չափելի ցուցանիշների բացակայությունը խոչընդոտում է թե՛ ռազմավարական նպատակների իրագործման ընթացքի, թե՛ ՄՈՒՀ-ի առաջընթացի, և թե՛ կառավարման գործընթացի արդյունավետության համապարփակ և հիմնավորված գնահատումը:

[2] ՀԱՎԵԼԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրումից հետո նախաձեռնել է կառավարման կառուցվածքի փոփոխություններ՝ ձգտելով ներգրավել նոր հաստիքներ, որոնք հնարավորություն կտան լիարժեքորեն իրականացնելու ռազմավարական նպատակները, ակայն փորձագիտական խումբը արձանագրում է, որ որոշ հաստիքների դեպքում առկա է գերբեռնվածություն, երբ մեկ աշխատակից իրականացնում է միաժամանակ մի քանի ոլորտների համակարգում, ինչն իր հերթին սահմանափակում է աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և կարող է բացասաբար ազդել ռազմավարական նպատակների համաչափ և ամբողջական իրականացման վրա։ Բացի այդ, տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները բեկումնային չեն դարձել կառավարչական մշակույթի մաս, իսկ տնօրենի տարեկան հաշվետվությունները, լինելով հիմնականում նկարագրական, չեն կապվում ռազմավարական նպատակների հետ։

Ինչ վերաբերում է որակի ապահովման գործընթացներին և տվյալահենք որոշումների կայացմանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ հավքագրվում են որոշակի տվյալներ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և որոշ դեպքերում՝ գործատուների միջոցով իրականացվող հարցումների միջոցով։ Սակայն տվյալների հավաքագրման գործընթացում առկա են պարբերականության, ընդգրկվածության և մեթոդաբանական հստակության խնդիրներ։ Հարցումների մեծ մասը մեկ անգամ է իրականացվել, մասնակիցների շրջանակը սահմանափակ է եղել, իսկ հարցաշարերում հաճախ տարբեր թեմաներ ընդգրկված են մեկ հարցի շրջանակում՝ առանց բաղադրիչների տարանջատման։ Արդյունքում վերլուծությունները հիմնականում մակերեսային են, չեն հիմնվում խորքային պատճառահետևանքային վերլուծության վրա, և հաճախ չեն հանգեցնում կարևոր կառավարչական որոշումների կայացմանը։

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ ՄԲՔ-ում կառավարման համակարգը որոշակի զարգացում է արձանագրել, ինչը հիմնականում պայմանավորված է ղեկավար անձնակազմի, մասնավորապես՝ տնօրենի և մի քանի այլ աշխատակիցների նախաձեռնություններով և անհատական ջանքերով։ Սակայն կառավարչական որոշումների կայացման գործընթացը դեռևս բավարար չափով չի հիմնվում համակարգված և վերլուծական տվյալների վրա, ինչի հետևանքով տվյալահենք կառավարումը դեռևս զարգացման փուլում է։

ՄՈՒՀ-ն մեծացրել է նաև պրակտիկ ոլորտից ներգրավված դասավանդողներին, որոնք ուսանողներին ներկայացնում են մասնագիտական միջավայրից բխող առաջադրանքներ՝ նպաստելով գործնական հմտությունների ձևավորմանը։ ՄՈՒՀ-ը պրակտիկ դասախոսներ ներգրավել է բացառապես բոլոր ՄԿԾ-ներում, ինչը ապահովում է որոշակիորեն ծրագրերի համաչափ զարգացումը։ Գործնական պարապմունքները իրականացվում են ինչպես քոլեջի սիմուլացիոն

Անդրադառնալով ուսանողներին տրամադրվող որակավորումների արժանահավատությանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը կարողացել է բարելավել ինչպես սեփական ռեսուրսային բազաները, մասնագիտական կաբինետները, այնպես էլ ընդլայնել է գործատուների շրջանակը՝

ապահովելով ուսանողներին առավել շատ գործնական միջավայրում լինելու և գործնական խնդիրներ լուծելու հնարավորությամբ: Բացի այդ, պրակտիկ դասախոսներ են ընդգրկվել բոլոր կրթական ծրագրերում, ինչը, ընդհանուր առմամբ, ապահովում է կրթական ծրագրերի համաչափ զարգացումը: Գործնական պարապմունքներն իրականացվում են ինչպես քոլեջի սիմուլացիոն և մասնագիտական լսարաններում, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների նյութատեխնիկական բազաներում: Սակայն, սեփական ռեսուրսների կառավարման տեսանկյունից, փորձագիտական խումբը արձանագրում է, որ քոլեջն ունի մի շարք ուսումնական ռեսուրսներ, որոնք ցրված են տարբեր լսարաններում և միշտ չէ, որ նպատակային ու համակարգված կերպով կիրառվում են: Փորձագիտական խումբը մատնանշում է, որ այդ ռեսուրսները կարող են արդյունավետորեն համակարգվել և կենտրոնացվել՝ ստեղծելով մասնագիտական ուղղվածությամբ համալրված լսարաններ և կաբինետներ: Բացի այդ, առկա ռեսուրսները համլրելով քիմիական պարզագույն ռեակտիվներով, որոնք պահանջում են նվազագույն ֆինանսական ներդրումներ, ՄՈՒՀ-ը կարող է ունենալ ստեղծել սեփական ուսումնական լաբորատորիաները, ինչն իր հերթին հնարավորություն կտա մի շարք տարրական փորձեր իրականացնելու անմիջապես քոլեջում:

Ուսանողների գնահատումն ուղղված է վերջնարդյունքների ապահովմանը, սակայն միատեսակ մոտեցումների բացը կարող է նվազեցնել գործընթացի հստակությունն ու արժանահավատությունը: Փորձագիտական խումբը կարևորում է մեթոդաբանության հստակեցումն ու դրա համահունչ կիրառումը բոլոր դասախոսների կողմից: Ինչ վերաբերում է պրակտիկաներին, դրական է դիտվում այն տենդենցը, որ ՄՈՒՀ-ը շարունակաբար ջանքեր է գործադրում դրանք կազմակերպելու ՀՀ առաջատար կլինիկաներում և առողջապահական հաստատություններում: Սակայն, ըստ փորձագիտական խմբի, պրակտիկաների վերահսկողության իրականացումը միայն մեկ անձի կողմից կարող է սահմանափակել վերահսկման արդյունավետությունը:

Քոլեջում ուսանողների համար ստեղծված է նպաստավոր կրթական միջավայր, և նրանց տրվում են հնարավորություններ նաև մասնագիտության մեջ զարգանալու համար: Ուսանողների ներգրավումը բժշկական հաստատություններ՝ որպես կամավորներ, ինչը նպաստում է գործնական հմտությունների ձևավորմանը: Շրջանավարտների բարձր զբաղվածության ցուցանիշները ևս վկայում են կրթական ծրագրերով տրամադրվող որակավորումների արժանահավատության մասին:

ՄԲՔ-ում հետազոտական աշխատանքները ակտիվանում են՝ ընդգրկելով ինչպես դասախոսներին, այնպես էլ նաև ուսանողներին: ՄՈՒՀ-ում գործում է գիտական տեղեկագիր, որտեղ դասախոսներին տրվում է անվճար տպագրության հնարավորություն, իսկ ուսանողներին հանձնարարում են աշխատանքներ, որոնք երբեմն ներառում են հետազոտական բաղադրիչներ: Միաժամանակ խումբը կարևորում է, որ դասախոսների հետազոտությունները առավել շատ ուղղվեն միջին մասնագիտական կրթության զարգացման խնդիրներին, ինչը կնպաստի ուսուցման և գործնական կիրառման միջև ավելի սերտ կապի ստեղծմանը:

ՄԲՔ-ում արտաքին կապերն ու միջազգայնացման գործընթացները դիտարկվում են որպես զարգացման ռազմավարական ուղղություն: Գործընկերային ցանցի հետևողական ընդլայնումը նպաստում է կրթական ծրագրերի իրականացմանը, ռեսուրսների համալրմանը և ուսանողների մասնագիտական զարգացմանը:

Ամփոփելով, փորձագիտական խումբը կարող է նշել, որ քոլեջը ունի բոլոր նախադրյալները իր հետագա զարգացման համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Հստակ ձևակերպված առաքելությունն ու ռազմավարական նպատակները, որոնք մշակվել են նախորդ հավատարմագրման արդյունքների և շահակիցների կարծիքի հիման վրա, ապահովում են քոլեջի շարունակական զարգացումը և կրթական գործընթացի որակական բարելավումը:
2. Գործադիր կառավարման մարմնի ճկունությունը, ինչը նպաստել է արտաքին կապերի ընդլայնմանը, ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացմանը (ներառյալ բարեգործական հիմնադրամների ներգրավմամբ), ինչպես նաև ենթակառուցվածքային բարելավմանը:
3. Ինտերակտիվ ուսուցման մեթոդների ակտիվ կիրառումը և գործնական պարապմունքների կազմակերպումը ինչպես քոլեջում, այնպես էլ գործընկեր կազմակերպություններում, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը:
4. Գործատուների և ոլորտի պրակտիկ մասնագետների հետևողական ներգրավումը ուսումնական գործընթացում՝ ապահովելով ուսանողների գործնական հմտությունների ձևավորումը:
5. Լսարանների վերանորոգման և տեխնիկական վերազինման ուղղությամբ իրականացված հետևողական աշխատանքը, ինչպես նաև բարեգործական աջակցությամբ ժամանակակից սիմուլացիոն սարքավորումների ներդրումը, որը նպաստել է ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացմանը:
6. Շրջանավարտների վերջին տարիների կայուն և բարձր զբաղվածության ցուցանիշները, որոնք փաստում են կրթական ծրագրերի գործնական կիրառելիության, մասնագիտական որակավորման արժանահավատության և աշխատաշուկայում դրանց պահանջվածության մասին:
7. Հետազոտական աշխատանքի հնարավորությունների առկայությունը քոլեջում՝ ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար:
8. Քոլեջում ձևավորված և շարունակաբար զարգացող միջազգային ու տեղական գործընկերային ցանցը, որը նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ իրագործմանը, նյութատեխնիկական և մասնագիտական ռեսուրսների համալրմանը:
9. Քոլեջում կիրառվող հաղորդակցման բազմազան միջոցները, ներառյալ սոցիալական մեդիայի հարթակները, տեղեկատվական բուկլետները, ինչպես նաև հանրային

ծրագրերի նախաձեռնումը, որն ապահովում է քոլեջի գործունեության թափանցիկությունը։

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցում չափելի ցուցանիշների, պատասխանատուների, արդյունքների, ժամկետների բացակայությունը։
2. Կառավարման համակարգի ուղղահայաց կառուցվածքը, որի շրջանակում որոշումների մեծ մասը կենտրոնացված է տնօրենի շուրջ։
3. Որակի ապահովման գործընթացների իրականացման համար ոչ հստակ մեթոդաբանությունը, պարբերականությունը և ներառականությունը, ինչն սահմանափակում է դրանց արդյունավետությունը։
4. Պրակտիկաների վերահսկման իրականացումը միայն մեկ աշխատակցի կողմից և պրակտիկաների գնահատման հստակ չափանիշների բացակայությունը, որը ստեղծում է ռիսկեր վերահսկողության արդյունավետության, ուսանողների առաջընթացի թափանցիկ գնահատման առումով։
5. Մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման համակարգված քաղաքականության բացակայությունը, որը վտանգում է հատկապես պրակտիկ ոլորտից դուրս գտնվող դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացումը։
6. Քոլեջի շենքի որոշ հատվածներում վերանորոգման և տեխնիկական հագեցվածության խնդիրը՝ ներառյալ հակահրդեհային անվտանգությունը, տարհանման ուղիները և ներառական միջավայրի ապահովումը, ինչը սահմանափակում է ուսանողների անվտանգությունն ու կրթական միջավայրի մատչելիությունը։
7. Ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը առանց հստակ ժամանակացույցի, որը վտանգում է հատկապես բացակայող ուսանողների ուսումնական նյութի համակարգված ընկալմանը։
8. Դասախոսների կողմից հրապարակվող հետազոտական աշխատանքների կենտրոնացումը բուհական մակարդակի թեմաների վրա և դրանց ոչ ամբողջական կապը միջին մասնագիտական կրթության ուղղակի խնդիրների հետ, ինչը սահմանափակում է դրանց կիրառելիությունը քոլեջի ուսումնական գործընթացում։
9. Ստորաբաժանումների և տնօրենի տարեկան հաշվետվությունների սահմանափակ վերլուծական բովանդակությունը և ռազմավարական ծրագրի նպատակների ու արդյունքների հետ կապի բացակայություն, ինչը նվազեցնում է տվյալների վրա հիմնված որոշումների կայացման արդյունավետությունը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Վերանայել ՌԾ պլան-ժամանակացույցը՝ ներառելով պատասխանատուներին, ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև առավել հստակեցնելու արդյունքների ձեռքբերման ժամկետները:
2. Իրականացնել ՌԾ-ի ընթացիկ մշտադիտարկումներ՝ համաձայն ՌԾ նպատակների և խնդիրների:
3. Սահմանել Քոլեջի աշխատանքի արդյունավետության գնահատման չափելի ցուցանիշներ՝ ելնելով ռազմավարական ծրագրի նպատակներից և խնդիրներից՝ հնարավորություն տալով հիմնադիրներին և ղեկավար կազմին կայացնել առավել փաստարկված և արդյունքահենք որոշումներ՝ հիմնված կատարողականի և առաջընթացի վրա:
4. Ստեղծել կոլեգիալ կառավարման նոր մարմին՝ տնօրենից անկախ ղեկավարությամբ, որի կազմում կներկայացվեն ներքին և արտաքին շահակիցներ՝ ապահովելով տնօրենի աշխատանքի արդյունավետության անկախ գնահատում և խթանելով արդյունքահենք ու թափանցիկ կառավարման մշակույթի ձևավորումը:
5. Խթանել կառավարման միջին օղակների (ցիկլային հանձնաժողովների) մասնակցությունը կառավարման գործընթացներին՝ ներգրավելով վերջիններիս մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները ռազմավարական պլանավորման, ռեսուրսների բաշխման և ուսումնական գործընթացի կազմակերպման որոշումներում:
6. Կազմակերպել գործատու դասախոսների պարբերական իրազեկման հանդիպումներ, որտեղ կներկայացվեն քոլեջի իրավական և կարգավորման փաստաթղթերը՝ նպաստելով նրանց լիարժեք ինտեգրմանը ուսումնական գործընթացում:
7. Ապահովել երկարաժամկետ ռազմավարական ծրագրի և ստորաբաժանումների կարճաժամկետ գործողությունների փոխկապակցվածությունը՝ ինչպես նաև հաշվետվությունների և ռազմավարական նպատակի միջև հստակ կապի ձևավորումը, ինչը կնպաստի ռազմավարական առաջընթացի համակարգված և արդյունքահենք գնահատմանը:
8. Վերանայել Որակի ապահովման կենտրոնի գործառույթների շրջանակը՝ այն շեշտադրելով որակի ապահովման ոլորտին բնորոշ գործընթացներով՝ ապահովելու համար արդյունավետություն և կենտրոնացվածություն:
9. Ապահովել հարցումների իրականացումը հստակ սահմանված մեթոդաբանությամբ, պարբերականության և շահակիցների լայն ընդգրկմամբ՝ միաժամանակ խորացնելով դրանց վերլուծությունը՝ այն ուղղելով ոչ միայն գոհունակության չափմանը, այլ նաև առկա խնդիրների համակարգված վերհանմանը:
10. Բազմազանեցնել որակի ապահովման ուղղությամբ տվյալների հավքագրման մեխանիզմները՝ ապահովելով տվյալների ստացման օբյեկտիվությունը:

11. Պարբերաբար հրապարակել որակի ապահովման գործընթացների արդյունքներն ու վերլուծությունները քոլեջի կայքէջում՝ խթանելով գործընթացների թափանցիկությունը։

Որակավորումների արժանահավատ շնորհում

12. Դիտարկել ՄԿԾ-ներում նախասիրական և ընտրովի առարկաների ներդրումը՝ ապահովելով ծրագրերի ճկունությունն ու համապատասխանությունը ուսանողների մասնագիտական հետաքրքրություններին և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին։
13. Ներդնել ուսանողներին տրվող հանձնարարականների, գնահատման թերթիկների (check list-երի) գնահատման չափանիշների միասնական շտեմարան՝ բարձրացնելու գնահատման թափանցիկությունն ու ապահովելու ուսանողներին տրվող առաջադրանքների շարունակական բարելավումը։
14. Վերանայել կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ուղեցույցը կամ ներդնել նոր կանոնակարգ՝ սահմանելով ՄԿԾ-ների մշտադիտարկման համար պատասխանատու կառուցվածքներ, պարբերականություն, գործիքակազմ և ընթացակարգեր՝ ապահովելով ՄԿԾ-ների համակարգված շարունակական բարելավում։
15. Հստակեցնել պրակտիկաների գնահատման չափանիշները՝ հիմնվելով այցելվող կազմակերպությունների մասնագիտական պրոֆիլների վրա և համապատասխանեցնելով մոդուլային ծրագրերի վերջնարդյունքներին։
16. Ապահովել Կոմիտաս 51 հասցեում գտնվող մասնաշենքի լսարանների վերանորոգումը, ինչպես նաև հակահրդեհային և տարհանման համակարգերի ներդրումը՝ ուսումնական միջավայրի անվտանգության բարձրացման նպատակով։
17. Թվայնացնել գրադարանային ֆոնդը և համալրել այն ժամանակակից մասնագիտական գրականությամբ՝ ներառյալ հայալեզու և օտարալեզու աղբյուրներ՝ ուսումնական տեղեկատվության հասանելիությունն ապահովելու և ուսումնական միջավայրի արդիականությունը բարձրացնելու նպատակով։
18. Վերանայել «Դեղագործություն» կրթական ծրագրի լաբորատոր պայմանների հագեցվածությունը, համակարգել և կենտրոնացնել ուսումնամեթոդական ու մասնագիտական ռեսուրսները՝ ձևավորելով թեմատիկ մասնագիտական լսարաններ (օրինակ՝ քիմիայի, ֆիզիկայի)՝ աստիճանաբար ձևավորելով կայուն և ինքնաբավ ռեսուրսային բազա գործնական և լաբորատոր պարապմունքների կազմակերպման համար։

Երկարաժամկետ զարգացում

19. Դիտարկել ուսանողի բաց թողնված ուսումնական նյութի պարտադիր լրացման քաղաքականության ներդրումը՝ ներառյալ հստակ ժամանակացույցի, պատասխանատու անձանց և կիրառվող մեթոդների սահմանումը՝ ապահովելով

ուսումնական գործընթացի շարունակականությունը և ուսանողների առաջադիմության հետևողական զարգացումը։

20. Ներդնել ռեֆերատների և ինքնուրույն աշխատանքների համար հստակ ձևաչափային և բովանդակային պահանջներ՝ խթանելով ուսանողների ինքնուրույն տվյալների հավաքագրման, վերլուծության և հիմնավորված եզրակացությունների ձևավորման կարողությունները։
21. Ընդլայնել հետազոտական թեմաների շրջանակը՝ ներառելով կիրառական և աշխատաշուկայից բխող խնդիրներ, և կապել դրանք ուսանողների գործնական և պրակտիկ գործունեության հետ՝ զարգացնելու նրանց մասնագիտական մտածողությունն ու հետազոտական հմտությունները։
22. Գնահատել «Քույրական գործ» ՄԿԾ-ում կուրսային աշխատանքների արդյունավետությունը և դրական արդյունքների դեպքում տարածել փորձը նաև այլ ՄԿԾ-ներում։
23. Ապահովել հաշվետվությունների ձևաչափի համահունչ կիրառումը բոլոր ստորաբաժանումներում՝ ընդլայնելով վերլուծական տարրերի, համեմատական վերլուծությունների ընդգրկումը՝ հիմնված Ռազմավարական ծրագրի նպատակների վրա։
24. Վերանայել տնօրենի տարեկան հաշվետվության կառուցվածքը՝ այն կապելով ՌԾ-ի նպատակներին և ցուցիչներին, ապահովելով առավել վերլուծական և ռազմավարական ուղղվածություն՝ նպաստելով կառավարման գործընթացների արդյունավետությանը։
25. Շարունակել դասախոսական կազմի օտար լեզվի վերապատրաստումների պարբերական կազմակերպումը՝ ապահովելով դրանց արդյունավետության ընթացիկ գնահատումը։
26. Շարունակել աշխատանքները միջազգային գործընկերների ներգրավման և Erasmus+ ծրագրերին մասնակցության ուղղությամբ՝ նպատակ ունենալով խթանել ուսանողների և աշխատակիցների փորձի փոխանակումը և կարողությունների զարգացումը։

Գագիկ Քթրյան
Փորձագիտական խմբի ղեկավարի

13-ը հունիսի 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Գագիկ Քթրյան-** Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Նաիրա Արշակյան-** ԵՊԲՀ ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
3. **Ասյա Հակոբյան-**Հենակետային Բժշկական Քոլեջի Պրակտիկայի բաժնի վարիչ, անատոմիայի եւ պաթոլոգիայի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Արեգ Խալափյան-** Երեւանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող, ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Մեհրաբյանի անվան բժկական քոլեջ-ի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 26.07.2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 28.08.2024թ. Մեհրաբյանի անվան բժկական քոլեջ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Մեհրաբյանի անվան բժկական քոլեջ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 22-ը նոյեմբերի 2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝

պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[3], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:[4]

Նախնական այց

17-ը փետրվարի 2025թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել Մեհրաբյանի անվան բժկական քոլեի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել մարտի 12-14-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ռեսուրսերի դիտարկում[5] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

---

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 2025թ.–ի մայիս 23-ին: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 02.06.2025թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 13.06.2025թ.-ին:

_____

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

13-ը հունիսի, 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի առաքելությունը ձևակերպված է 2021-2025թթ. ռազմավարական ծրագրում (այսուհետև՝ ՌԾ) : Առաքելության համաձայն՝ «Քոլեջը միջին մասնագիտական կրթական հաստատություն է, որը նպատակուղղված է առողջապահության ոլորտում բարձրորակ մասնագետների պատրաստմանը, միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով ուսանողների մոտ գիտելիքների ստեղծմանը, պահպանմանը, հմտությունների և կարողությունների ձեւավորմանը, սիրո ու նվիրվածության զգացումների առաջացմանն ու ամրապնդմանն իր ընտրած մասնագիտության նկատմամբ, ինչպես նաև իր ժողովրդին ազնվությամբ ծառայելուն»: Անհրաժեշտ է նշել, որ առաքելության մեջ շեշտադրված չէ միջազգային բաղադրիչը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իր ՄԿԾ-ներում այն կարևորում է՝ փորձելով ապահովել միջազգային կապեր և օտար լեզվի բավարար մակարդակ:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է իրականացնում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջի տրամադրված կրթությամբ շրջանավարտների մեծ մասը իրենց մասնագիտությամբ կարողանում են իրենց տեղը գտնել աշխատաշուկայում, իսկ որոշակի հատված էլ անմիջապես ավարտելուց հետո շարունակում են իրենց կրթությունը բուհերում:

Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի ռազմավարական նպատակները, որոնք ուղղված են արդյունավետ կառավարմանը և վարչարարությանը, մրցունակ ՄԿԾ-ների իրականացմանը, որոշումների կայացման գործընթացում ուսանողների ներգրավվածության մեծացմանը, որակյալ դասախոսական անձնակազմի ձևավորմանը, հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության ապահովմանը, նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների շարունակական բարելավմանը, միջազգային և արտաքին գործունեության ընդլայնմանը, որակի մշակույթի ամրապնդմանը: Նշենք, որ նշված նպատակները ձևավորվել են նաև նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա և քոլեջին մղել են զարգացման հիմնականում միջազգայնացման, ռեսուրսների համալրման, դասախոսական կազմի հետազոտական աշխատանքների իրականացման ուղղությամբ:

ՌԾ-ում սահմանված են նպատակներից բխող խնդիրները, կատարվող քայլերը և սպասվող արդյունքները: Անհրաժեշտ է նշել, որ սպասվող արդյունքների մեծ մասը շատ ընդհանուր և ֆորմալ են, օրինակ՝ հաշվետվությունների, արձագրությունների առկայություն և այլն: Ռազմավարական

նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որն ըստ էության նույնական է ՌԾ-ի հետ. միայն ավելացվել է ըստ տարիների բաշխման սյունակը: Պլանում բացակայում են պատասխանատուները, ֆինանսական ռեսուրսները, ԳԱՑ-երը:

Ըստ «ՄՈՒՀ-ի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգի՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսումնառողներն ու ՊԴ կազմը, իսկ արտաքին շահակիցները՝ պետական մարմիններ, գործատուներ, շրջանավարտներ, հասարակություն: Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հիմք ընդունելով՝ ՌԾ մշակման համար տնօրենի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը բացի ներքին շահակիցներից ներառել է նաև 1 արտաքին շահակից՝ որպես խորհրդատու: Ըստ ԻՎ տվյալների՝ ՌԾ-ն մշակելիս իրականացվել է ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն հարցումների միջոցով, կազմակերպվել են քննարկումներ ուսանողների, դասախոսների, գործատուների, դիմորդների և շրջանավարտների շրջանում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները:

Քոլեջի առաքելության և նպատակների մշտադիտարկման ու գնահատման մեխանիզմ են հանդիսանում տնօրենի կողմից իրականացվող ներքին գնահատումները, որոնք հիմնվում են կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած հաշվետվությունների վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ներքին գնահատումներն անմիջականորեն չեն անդրադառնում ռազմավարական նպատակներին և խնդիրներին: Դրանք, ըստ էության, տվյալ տարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփումն են՝ հիմնված ստորաբաժանումների գործունեության արդյունքների վրա, որոնց միջոցով իրականացվում է քոլեջի ձեռքբերումների գնահատում նախորդ տարվա համեմատ:

Դատողություններ: Դրական է, որ քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որի ուղղությամբ շարժվում է և նախանշում իր հետագա զարգացումը: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարող է իր առաքելության մեջ ընդգրկել նաև միջազգայնացման բաղադրիչը, հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը որդեգրել է նորարարական մոտեցումների արդյունավետ ինտեգրում, կրթական ծրագրերի արդիականացում՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա, ինչպես նաև օտար լեզուների հմտությունների զարգացում, ինչը կնպաստի շրջանավարտների մրցունակությանը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը, հաշվի առնելով տրամադրված խորհրդատվությունները, մշակել է զարգացմանն ուղղված ռազմավարական պլան: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի մշակելու ՌԾ նպատակների իրականացմանն ուղղված չափելի որակական և քանակական ցուցանիշներ, ինչը հնարավորություն կտա գնահատելու սեփական առաջընթացը և ստորաբաժանումների առջև դնելու առավել հստակ և կոնկրետ խնդիրներ: Բացի այդ, ՄՈՒՀ-ը ՌԾ-ի պլան-ժամանակացույցում կարիք ունի ներառելու պատասխանատուներին, ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև առավել հստակեցնելու արդյունքների ձեռքբերման

ժամկետները, ինչը կնպաստի ռեսուրսների նպատակային բաշխմանը, հաշվետվողականության մեխանիզմների ամրապնդմանը և ռազմավարական կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է ներքին գնահատումներ, որոնք թույլ են տալիս գնահատելու կատարված աշխատանքը և դիտարկելու առաջընթացը նախորդ տարվա համեմատ: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին գնահատումներն առավել արդյունավետ կլինեն, եթե իրականացվեն համաձայն ՌԾ նպատակների և խնդիրների: Այս մոտեցումը հնարավորություն կտա ներքին գնահատումները վերածելու այնպիսի գործիքի, որը թույլ կտա գնահատել ռազմավարական կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև հիմք կհանդիսանա ՌԾ-ի ընթացիկ մշտադիտարկման և դրա լիարժեք իրականացման ապահովման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄԲՔ-ն իր ռազմավարական նպատակները ձևավորել է՝ հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման փորձագիտական արդյունքները, քոլեջի սահմանված նպատակները տանում են զարգացման, ընդգծում են քոլեջի գործունեության ոլորտը որպես բժշկական հաստատություն, քոլեջի ներքին և արտաքին շահակիցները կիսում են ռազմավարական նպատակները և նպաստում դրանց իրագործմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջը **բավարարում է** չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: ՄԲՔ կառավարումն իրականացվում է Հիմնադիրների խորհրդի և տնօրենի կողմից: Կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադիրների խորհուրդն է, որը բաղկացած է չորս հիմնադիր անդամներից: Խորհրդի նախագահը քոլեջի տնօրենն է: Խորհուրդը հաստատում է քոլեջի ռազմավարական և տարեկան ծրագրերը, եկամուտների և ծախսերի նախահաշիվները, քոլեջի կառուցվածքը, ընդունում է ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթեր, գնահատում է տնօրենի տարեկան հաշվետվությունը, այդ թվում՝ ֆինանսական, որոշում է գործունեության հիմնական ուղղությունները: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ Հիմնադիրների խորհրդի կողմից առաջնահերթություն է տրվում քոլեջի կրթական միջավայրի բարելավմանը, ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացմանը, գործընկերային կապերի

ընդլայնմանը, ինչպես նաև միջազգային համագործակցության զարգացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Խորհրդի հանդիպումները տեղի են ունենում տարին մեկ անգամ, որին մասնակցում են նաև քոլեջի մյուս աշխատակիցները (հաշվապահ, ստորաբաժանումների ներկայացուցիչներ) և գործատուների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Հիմնադիրների խորհուրդը տնօրենի առջև աշխատանքի արդյունավետության գնահատման հստակ ցուցիչներ չի դնում:

Մանկավարժական խորհրդում քննարկվում են կրթական ծրագրերը, իրականացված դասալսման արդյունքները և ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդի նախագահը նույնպես քոլեջի տնօրենն է: Մանկավարժական խորհրդում ընդգրկված են ինչպես վարչական, այնպես էլ դասախոսական ողջ անձնակազմը: Խորհրդի նիստերին մասնակցելու համար երբեմն հրավիրվում են նաև գործատու-ներկայացուցիչներ, Ուսանողական խորհրդի նախագահը և կուրսերի ավագները: Խորհրդում ներկա ուսանողները մասնակցում են իրենց առնչվող հարցերի քննարկմանը, ինչպիսիք են՝ լուծարքները, բացակայությունները, պրակտիկաների կազմակերպումը և այլն:

Նախորդ հավատարմագրումից հետո, 2021թ–ին քոլեջը վերանայել է իր կազմակերպական կառուցվածքը. ավելացվել են կադրերի տեսուչի, հանրային կապերի, ներառական կրթության ապահովման համակարգողի և հետազոտական աշխատանքների համակարգողի հաստիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստիքային վերանայումները պայմանավորված են եղել օրենսդրական պահանջներով (մասնավորապես՝ ներառական կրթության ապահովման վերաբերյալ պետության պահանջով) և ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման անհրաժեշտությամբ: Արտաքին կապերի ստորաբաժանումը վերակազմակերպվել է՝ դառնալով Պրակտիկայի կազմակերպման, կարիերայի, արտաքին կապերի և միջազգայնացման ստորաբաժանում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ստորաբաժանումը նաև իրականացնում է հետազոտական ուղղությամբ որոշ գործառույթներ՝ մասնավորապես քոլեջի գիտական տեղեկագրի հրատարակման կազմակերպումը և համակարգումը: Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ ստորաբաժանումը փաստացի ունի ընդամենը մեկ աշխատակից (ղեկավարը), իսկ ևս երկու աշխատակից ընդգրկված են միայն գիտական տեղեկագրի հրատարակման և խմբագրման աշխատանքներում: Ստորաբաժանման ղեկավարը գերծանրաբեռնված է վերը նշված՝ միաժամանակ չորս ոլորտների համակարգմամբ: Բացի այդ, հանրային կապերի և ներառական կրթության ապահովման համակարգողը զուգահեռաբար իրականացնում է նաև միջազգայնացմանն առնչվող որոշ գործառույթներ, ինչպիսիք են՝ միջազգային գործընկերների հետ նամակագրության վարումը, Erasmus+ ծրագրի հետ առնչվող հարցերը:

Կրթական ծրագրերի կառավարումն իրականացվում է ցիկլային հանձնաժողովների կողմից: Վերջիններս միմյանց հետ համագործակցում են դասավանդման լավագույն փորձի փոխանակման և ուսանողների առաջադրանքների կազմման հարցերում՝ միջառարկայական կապերի ձևավորման նպատակով: Նշված համագործակցությունը երևում է նաև ցիկլային հանձնաժողովների տարեկան պլաններում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ցիկլային հանձնաժողովները դասախոսների առջև միևնույն պահանջները չեն դնում, դա է փաստում այն, որ

կան դասախոսներ, որոնք ունեն փաթեթներ, որոնք ներառում են դասի պլաններ, ուսումնառության նյութեր, գնահատման ձևեր և այլն յուրաքանչյուր դասի համար, իսկ որոշ դասախոսների մոտ դրանք բացակայում են: Վերջինս պայմանավորված է նաև նրանով, որ որոշ դասախոսներ գործատուներ են: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է փաստել, որ գործատու դասախոսներից շատերը լիարժեք տեղյակ չեն քոլեջի ընդունած իրավական կարգավորումներից, օրինակ՝ գնահատման կարգից: Նմանատիպ ընթացիկ քննարկումներ հրավիրյալ դասախոսների հետ տեղի չեն ունեում:

Ըստ բյուջեի 2023-2024 ուստարվա նախահաշվի՝ ֆինանսական մուտքերը ձևավորվում են հետևյալ համամասնությամբ՝ ուսման վարձեր 91%, վարձակալությամբ տրվող տարածքներ 4%, դրամաշնորհ, բարեգործական օգնություն 3%, կարճաժամկետ դասընթացներ 1%, բժշկական տեղեկագրի հրատարակչություն 1%: Ծախսերի 75%-ը բաժին է ընկնում աշխատավարձերին և հարկերին, բացի այդ՝ շենքային պահպանման ծախսեր 13,5%, զարգացման ծախսեր (ՏՏ տեխնիկայի ձեռքբերում և ներդնում) 5%, ուսումնական ծախսեր 2,5%, գովազդ 1%, այլ չնախատեսված ծախսեր 3%: Անհրաժեշտ է նաև նշել, որ ռեսուրսային բարելավման ուղղությամբ քոլեջը համագործակցում է բարերարների հետ, օրինակ 2022թ. «Viva» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությամբ ձեռք է բերել “Քույրական գործ” ՄԿԾ–ի համար սիմուլյացիոն սարքեր (մուլյաժներ):

Ինչ վերաբերում է ռեսուրսների կառավարմանը՝ փորձագիտական խումբը արձանագրում է, որ քոլեջում առկա են բազմաթիվ ուսումնական ռեսուրսներ (պաստառնել, ցուցադրական նյութեր, մուլյաժներ, սարքավորումներ և այլն), որոնք նպատակային չեն կիրառվում, քանի որ ցրված են տարբեր լսարաններում, կենտրոնացված չեն մասնագիտական սենյակներում և որոշ գործնական դասեր, որոնք կարող էին իրականացվել քոլեջում, չեն իրականացվում, օրինակ՝ դեղաբանության, անատոմիայի, քիմիայի և այլն:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական (երկարաժամկետ) և ընթացիկ տարեկան (կարճաժամկետ) պլանավորումներով: Չնայած այն հանգամանքին, որ երկարաժամկետ ծրագրում սահմանված չեն ռազմավարական նպատակներին հասնելու ցուցանիշներ՝ անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների ուղղությամբ մշակել է առանցքային ցուցանիշներ: Միևնույն ժամանակ, փաստաթուղթը հաստատված չէ և չի կիրառվում: Այն ներառում է վերջին 4 ուսումնական տարիների ցուցանիշներ, որոնք վերլուծության չեն ենթարկվել և չեն ներառվել քոլեջի հաշվետվություններում: Կարճաժամկետ պլանների դիտարկումը ցույց տվեց, որ վերջիններս լիովին և անմիջականորեն չեն կապակցվում ռազմավարական ծրագրին: Յուրաքանչյուր ստորաբաժանում իր պլանավորումն իրականացնում է տվյալ ստորաբաժանման գործառույթներից ելնելով: Քոլեջը նաև սա համարում է իր թույլ կողմերից մեկը:

ՄՈՒՀ-ը ստորաբաժանումների պլանների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է տարեկան հաշվետվությունները: Հաշվետվությունները բովանդակային և տեխնիկական առումով ուստարվա ավարտին գնահատվում են Որակի ապահովման կենտրոնի կողմից: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը փորձել է իր հաշվետվությունները դարձնել

առավել վերլուծական։ Հավետվություններում ներառվել են որոշակի դիագրամներ, որով դիտարկվում է նախորդ և տվյալ տարվա դինամիկան, օրինակ՝ ընդունելության արդյունքներ, շրջանավարտների զբաղվածության ցուցանիշներ և այլն։ Հաշվետվությունները ամփոփվում են SWOT վերլուծությամբ, թույլ կողմերի իրականացման համար առանձնացվում են նաև բարելավման ուղղություններ, օրինակ՝ միջազգային գործընկերների ընդլայնում, անվճար տեղերի հատկացման ուղղությամբ աշխատանքներ ԿԳՄՄՆ-ի հետ։ Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ օրինակ տնօրենի տարեկան հաշվետվության մեջ արտահայտված չէ վերլուծական բաղադրիչը, այս մոտեցումը ինստիտուցիոնալ չէ։ Հաշվետվությունը չի կապվում ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի հետ։ Հաշվետվությունները հիմնականում նկարագրական են, իսկ SWOT վերլուծությունը մեծամասամբ կրկնում է ՈԱԿ-ի կազմած հաշվետվությունների ներքին գնահատման SWOT-ը։

Քոլեջն իր վրա ազդող կարևոր գործոն դիտարկում է պետության կողմից ուսանողներին տրվող անվճար տեղերի և պետական բյուջեից այլ ֆինանսական հատկացումների բացակայությունը։ Քոլեջը այս գործոնը հաղթահարելու նպատակով գտել է գործընկերներ, որոնք ուսանողներին տրամադրում են կրթաթոշակներ, ինչպես նաև իր բյուջեից տրամադրում է ուսման զեղչեր։ Ներքին գործոններից են ֆինանսական միջոցների և լաբորատոր բազաների սահմանափակ լինելը։ Այս ուղղությամբ փորձեր են արվում գտնել գործատու-դասախոսներ, որոնք որպես առաջին աշխատանք գործունեություն են ծավալում այլ լաբորատորիաններում և իրենց դասերը կարողանում են անցկացնել այդտեղ։ Փորձագիտական խումբը արձանագրում է, որ Քոլեջը համակարգային ձևով չի ուսումնասիրում իր վրա ազդող բոլոր գործոնները։

Իսկ ինչ վերաբերում է Քոլեջում կառավարման և մյուս գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը, ապա փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը հիմնականում գտնվում է գնահատման կամ ՊԻԳԲ-ի երկրորդ ցիկլի իրականացման փուլում։ Վերանայվել են հաշվետվողականության ձևաչափերը՝ ներառելով որոշ վերլուծական բաղադրիչներ, վերանայվել են որակի ապահովման նպատակով կիրառվող հարցաթերթերը, ինչպես նաև կազմակերպական կառուցվածքը։ Ներկայումս գնահատման փուլում են գտնվում պաշտոնի անձնագրերը և ստորաբաժանումների գործառույթները։

Կրթական և այլ գործընթացների գնահատման նպատակով որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվում են հարցումներ, կազմակերպվում են քննարկումներ, դասալսումներ, ինչպես նաև ուսումնասիրվում են կարծիքներ, այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի եզրակացությունները, որոնցում արձանագրված շրջանավարտների առաջադիմությունները վկայում են, որ հանձնաժողովները հիմնականում գոհ են շնորհվող որակավորումների որակից։ Կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման հիմնական ցուցիչը ՄՈՒՀ-ի համար դիտարկվում է շրջանավարտների զբաղվածությունը, որը բավականին բարձր է (մոտ 75%)՝ ըստ ներկայացված տվյալների։

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակման գործիքակազմ են հանդիսանում քոլեջի առավելապես սոցիալական ցանցի էջերը։ ՄՈՒՀ-ն իր պաշտոնական կայքէջում չի հրապարակում տվյալներ կապված շրջանավարտների

զբաղվածության, մասնագիտական առաջընթացի և այլնի վերաբերյալ, որոնք ցույց են տալիս քոլեջի տրամադրած որակավորումների արժանահավատությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ Հիմնադիրների խորհրդի անդամները, հանդիսանալով սեփականատերեր, շահագրգռված են քոլեջի շարունակական զարգացմամբ և հեռանկարային գործունեությամբ: Գովելի է նաև, որ Հիմնադիրների խորհրդի նիստերին մասնակցում են նաև Քոլեջի աշխատակազմի և գործատու գործընկերների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, ինչը նպաստում է որոշումների կայացման գործընթացում շահակիցների ներգրավվածությանը և տարբեր տեսակետների հաշվառմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը շեշտադրում է, որ, հաշվի առնելով հաստատության մասնավոր կարգավիճակը, կարևորում է կառավարման արդյունավետության գնահատման ցուցանիշների սահմանումը: Նման ցուցանիշների մշակումը և կիրառումը թույլ կտա հիմնադիրներին և ղեկավար կազմին հիմնված որոշումներ կայացնել՝ հիմնված գործունեության արդյունքների վերլուծության վրա, ինչպես նաև գնահատել կրթական, ֆինանսական և կառավարչական գործընթացների արդյունավետությունն ու շարունակական բարելավման հնարավորությունները և կայացնել արդյունքահենք որոշումներ: Փորձագիտական խումբը առաջարկում է նաև դիտարկել կոլեգիալ կառավարման նոր մարմին ստեղծելու հնարավորությունը, որի ղեկավարումը վերապահված չի լինի քոլեջի տնօրենին (քանի որ տնօրենը միաժամանակ հանդիսանում է և՛ Հիմնադիրների, և՛ Մանկավարժական խորհուրդների նախագահը): Խորհդում կարող են ներկայացված լինեն ներքին և արտաքին շահակիցներ, որոնք հնարավորություն կունենան ներգրվվելու քոլեջի կառավարմանը և արտաքին արձագանք կապահովեն կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ: Այս մոտեցումը հնարավորություն կտա Քոլեջին միանձնյա կառավարումը զուգակցել կոլեգիալ կառավարմանը:

Դրական է, որ Քոլեջը վերանայել է իր կազմակերպական կառուցվածքը՝ այն փորձելով համապատասխանեցնել ռազմավարական ուղղություններին: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը արձանագրում է, որ առանձին աշխատակիցների մոտ տեսանելի է գործառույթների չափազանց լայն շրջանակ, ինչը կարող է սահմանափակել դրանց արդյունավետ իրականացումը և խոչընդոտել ռազմավարական նպատակների լիարժեք իրագործմանը:

Դրական է, որ Քոլեջը ձեռնարկում է քայլեր ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման ուղղությամբ՝ փորձելով ընդլայնել ֆինանսավորման աղբյուրների շրջանակը: Այնուամենայնիվ, ֆինանսական մուտքերի գերակշիռ մասը շարունակում է ձևավորվել ուսման վարձերից, իսկ Քոլեջի ֆինանսական հնարավորությունները դեռևս սահմանափակ են, ինչը կարող է որոշակի խոչընդոտներ առաջացնել հաստատության երկարաժամկետ և կայուն զարգացման գործընթացում: Միևնույն ժամանակ, գովելի է տնօրենի կառավարման ճկունությունը, որը նպաստում է բարերարների ներգրավմանը և արտաքին ֆինանսավորման աղբյուրների ակտիվ որոնմանը՝ մասնավորապես ֆինանսական մեծ ներդրումներ պահանջող լաբորատոր հագեցվածության ապահովման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է միջին օղակների կառավարմանը (ցիկլային հանձնաժողովներ), ապա փորձագիտական խումբը նշում է, որ այս մակարդակում կարևոր է դրսևորել առավել մեծ ակտիվություն ընդունված որոշումները, կարգերը բոլոր դասախոսներին (մանավանդ գործատու և պրակտիկ ոլորտի) հասանելի և իրազեկ դարձնելու համար: Իսկ ինչ վերաբերում է ռեսուրսների կառավարմանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտ է դրանք առավել արդյունավետ բաշխել՝ ապահովելով ուսումնական գործընթացի առավել համակարգված կազմակերպմանը:

Դրական է, որ Քոլեջը իրականացնում է ռազմավարական և տարեկան պլանավորում, ինչպես նաև մշակել է առանցքային ցուցանիշներ: Այնուամենայնիվ, այն, որ ցուցանիշները փաստացի հաստատված չեն և կիրառության մեջ չեն դրվել, ինչպես նաև չեն կապակցվել կարճաժամկետ պլաններին և ռազմավարական ծրագրին, դրանք կարող են սահմանափակել կառավարման արդյունավետությունը և նպատակների ձեռքբերման գնահատումը: Իսկ ինչ վերաբերում է քոլեջի վրա ազդող արտաքին և ներքին գործոններին, ապա քոլեջը որոշ դեպքերում արձանագրում է ռիսկերը և արձագանքում դրանց՝ իրականացնելով առանձին քայլեր: Սակայն գործոնների ուսումնասիրությունը համակարգային ձևով չի իրականացվում, ինչը կարող է հանգեցնել դրանց ազդեցության թերի գնահատմանն ու կանխարգելման մեխանիզմների անարդյունավետությանը:

Իսկ ինչ վերաբերում է կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակմանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարիք ունի ակտիվացնելու իր պաշտոնական կայքէջը և հրապարակելու այնպիսի փաստարկված տվյալներ, որոնք հասարակությանը կտրամադրեն տեղեկատվություն քոլեջի կողմից տրվող որակավորումների արժանահավատության վերաբերյալ: Այդ թվում՝ շրջանավարտների զբաղվածության ցուցանիշներ, նրանց մասնագիտական առաջընթացը, հաջողության օրինակներ և այլն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի գործող կառավարման համակարգը որոշակիորեն իրավիճակային է, որոշ ստորաբաժանումների ղեկավարներ գերծանրաբեռնված են, կայացված որոշումները և ընթացակարգերը համաչափ չեն տարածվում ստորին օղակներում, միջին կառավարման օղակները ակտիվորեն ներգրավված չեն կառավարմանը, ռեսուրսային կառավարումը համակարգված և նպատակային չի իրականացվում, առկա չեն տվյալների հավաքագրման համակարգային և կայուն մեխանիզմներ, չի արմատավորվել ռազմավարական կառավարումը, հաշվետվությունները չեն կապվում ռազմավարական նպատակների հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԲՔ-ն **չի բավարարում** չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: ՄԲՔ-ն իրականացնում է միջին մասնագիտական բժշկական կրթական ծրագրեր հետևյալ մասնագիտություններով՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա», ինչպես նաև մեկ ծրագիր սպասարկման ոլորտում՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»: 2023-2024 ուսումնական տարում կրթական հաստատությունը ՄԿՈՒԶԱԿ-ին ներկայացրել է առաջարկ «Պրակտիկ էրգոթերապիստ կամ էրգոթերապիստի օգնական» կրթական ծրագրի չափորոշչի մշակման ուղղությամբ, որի հաստատումից հետո քոլեջը հնարավորություն կունենա ներդնել նշված ծրագիրը: Ներկայումս այս ուղղությամբ ուսումնական հաստատությունը քննարկումներ է իրականացնում ՄԿՈՒԶԱԿ-ի և ԿԳՄՄՆ-ի հետ:

ՄՈՒՀ-ում պետական կրթական չափորոշիչները ներդրվել են նույնությամբ և կրթական ծրագրերը հիմնականում փոփոխությունների չեն ենթարկվել: ՄԿԾ-ներում նախասիրական և ընտրովի առարկաներ/մոդուլներ ներդրված չեն: Միայն «Դեղագործություն» կրթական ծրագրում գործատուի հետ համագործակցության արդյունքում առաջարկվել է «Դեղագործական մարքեթինգ և մենեջմենթի հիմունքներ» մոդուլից առանձնացնել «Վաճառքի հմտություններ» մոդուլը և այն ներդնել որպես առանձին մոդուլ[6]: Ներկայումս գործատուի հետ համատեղ ընթանում են այդ մոդուլի մշակման աշխատանքները: Մնացյալ բոլոր ծրագրերում փոփոխությունները կապված են անգլերեն լեզվի ժամաքանակի ավելացման և տարբեր մոդուլային ծրագրերում ուսումնասիրվող թեմաների արդիականացման հետ. օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ի մոդուլներում ավելացվել են «Կերամիկական շապիկներ», «Վիներներ» թեմաները և այլն: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջը որպես դասախոսներ ներգրավել է ոլորտի պրակտիկ մասնագետների, ովքեր տեղեկացված են ոլորտի փոփոխություններին, և թեմաների ընտրությունը հաճախ անմիջապես բխում է աշխատաշուկայի պահանջներից:

Ինչ վերաբերում է դասավանդմանը, ապա դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսների կողմից հիմնականում կիրառվում են սահիկաշարեր, ցուցադրվում դիդակտիկ նյութեր, տեսանյութեր, իրականացվում են մտագրոհներ և կիրառվում այլ ինտերակտիվ մեթոդներ: Կրթական ծրագրերի շրջանակներում որևէ գործողություն իրականացնելուց առաջ դասախոսը նախ ցուցադրում է համապատասխան մանիպուլացիան, այնուհետև ուսանողները կատարում են այդ նույն վարժանքները կամ սիմուլացիոն լաբորատորիայում (օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ի դեպքում ներարկումների կատարում, առաջին բուժօգնության ցուցաբերում), կամ մոդել հանդիսացող անձանց վրա (օրինակ՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» ծրագրի դեպքում մերսման տեխնիկաներ, մազահեռացման մեթոդներ, մաշկի խնամք և այլն): «Դեղագործություն»

[6] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկման հիման վրա:

կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները դասակարգում են դեղերը ըստ դեղաբանական խմբերի, ինչպես նաև ուսումնասիրում և կիրառում փոշիների ստացման գործընթացը: Հարկ է նշել, որ «Դեղագործություն» կրթական ծրագրի հիմնական գործնական դասերը իրականացվում են գործատուի լաբորատորիայում, քանի որ քոլեջում համապատասխան լաբորատոր պայմաններ առկա չեն:

Ուսանողների գնահատումը քոլեջում իրականացվում է տարբեր թեստային աշխատանքների, հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական աշխատանքների միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողների գնահատման գործընթացում check list-եր չեն կիրառվում: Դասալսման ընթացքում արձանագրվեց, որ ուսանողները քայլերի հերթականությունը իրականացնում են ըստ այն հերթականությամբ, որն ընդունված է պրակտիկայում, ուսանողները դրանք նախապես ուսումնասիրում են ուսումնական նյութերի միջոցով, իսկ դասախոսը ուսանողին հետադարձ կապ է տրամադրում check list-ի տրամաբանությամբ՝ սակայն հիմնվելով իր պրակտիկ փորձառության վրա:

Նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խումբը արձանագրել էր, որ ընթացիկ գնահատումն իրականացվել է տարբեր դասախոսների կողմից տարբեր մեթոդաբանությամբ, և գնահատման միասնական մոտեցում չի կիրառվել: Օրինակ՝ որոշ դասախոսներ գնահատման մեջ որպես բաղադրիչ ներառել են ուսանողի բացակայություններն ու ակտիվությունը, մինչդեռ մյուսները դրանք չեն դիտարկել որպես գնահատման գործոն: ՄՈՒՀ-ում այս խնդիրը կարգավորելու նպատակով 2021թ. վերանայվել է «Գնահատման կարգը», որի շրջանակում հստակ սահմանվել են գնահատման բաղադրիչները: Ըստ այդ կարգի՝ գնահատումը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ հաճախումներ և ընդհանուր ակտիվություն 5%, աշխատանքներ 30%, միջանկյալ ստուգում 1-20%, միջանկյալ ստուգում 2-20%, ամփոփիչ ստուգում-25%: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման այս տրամաբանությունը ոչ բոլոր դասախոսների կողմից է կիրառվում, և դասախոսների մի մասը ամբողջությամբ ծանոթ չէ գնահատման կարգին, իսկ գնահատման մեթոդաբանությունը հաճախ կիրառվում է դասախոսի անհատական նախընտրությամբ:

ՄՈՒՀ-ում իրականացվում են հետևյալ պրակտիկաների տեսակները՝ ուսումնական պրակտիկա՝ տեսական ուսուցմամբ և առանց տեսական ուսուցման, նախաավարտական, արտադրական պրակտիկաներ: Պրակտիկաները հիմնականում տեղի են ունենում գործատուների մոտ (բացառությամբ ատամնատեխնիկական գործ ՄԿԾ-ի, վերջինս իրականացվում է քոլեջի լաբորատորիաներում): Անհրաժեշտ է նշել, որ քոլեջը շարունակաբար քայլեր է ձեռնարկում պրակտիկայի վայրերի բազմազանեցման ուղղությամբ: Պրակտիկայի գնահատումը իրականացվում է գործատուի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի կողմից՝ 20 բալանոց համակարգով՝ հիմնվելով ուսանողի կողմից իրականացրած աշխատանքի և լրացված օրագրի վրա: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ պրակտիկաների գնահատման հստակ չափանիշներ ներդրված չեն, և պրակտիկաներին մասնակցությունը ամբողջ քոլեջում վերահսկվում է միայն պրակտիկայի կազմակերպման, կարիերայի, արտաքին կապերի և միջազգայնացման ստորաբաժանման ղեկավարի կողմից:

Քոլեջը փորձարարական ձևով «Քույրական գործ» կրթական ծրագրում 2025թ. համար ներդրել է կուրսային աշխատանքների իրականացումը՝ որպես ամփոփիչ ատեստավորման բաղադրիչ: Ուսանողները կուրսային աշխատանք պետք է ներկայացնեն մինչև ամփոփիչ ատեստավորումը, և միայն կուրսային աշխատանքի բավարար գնահատական ստանալու դեպքում կարող են մասնակցել բանավոր ամփոփիչ ատեստավորմանը: ՄՈՒՀ-ը պլանավորում է շրջանավարտի դիպլոմի մեջ տրամադրել երկու առանձին գնահատական՝ ամփոփիչ ատեստավորման և կուրսային աշխատանքի համար: Ե՛վ կուրսային աշխատանքը, և՛ ամփոփիչ ատեստավորումը գնահատվում են 20 բալային համակարգով: Կուրսային աշխատանքների հաստատված թեմաների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշ թեմաներ ընդարձակ են, օրինակ՝ «Ծերունական հիվանդություններ, հերիատրիկ ծառայության վիճակը ՀՀ-ում», «Չարորակ ուռուցքների վիճակագրությունը ՀՀ-ում, քույրական խնամքի առանձնահատկությունները»: Կուրսային աշխատանքների ներկայացման գործընթացի կարգավորման նպատակով քոլեջը մշակել է ուղեցույց, որը ներառում է նաև կուրսային աշխատանքների տեխնիկական պահանջները, գնահատումը, բողոքարկումը:

Ամփոփիչ ատեստավորման հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Քույրական գործ» մասնագիտական կրթական ծրագրում քննական տոմսերը բաղկացած են չորս հարցից, որոնցից մեկը վերաբերում է գործնական հմտությունների ցուցադրմանը, որոնք ենթադրում են սիմուլացիաների իրականացում: «Դեղագործություն» կրթական ծրագրում ատեստավորման հարցաշարերը հիմնականում տեսական բնույթի են:

ՄԿԾ բենչմարքինգը ՄՈՒՀ-ում դիտարկվում է ՄԿԾ-ների վերանայման գործընթացի բաղկացուցիչ մաս՝ համաձայն սահմանված կարգի: ՄՈՒՀ-ը բենչմարքինգ իրականացրել է 2022 թվականին՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի և Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջի հետ: Այս նպատակով ձևավորվել է բենչմարքինգ իրականացնող աշխատանքային խումբ, որի ուսումնասիրության արդյունքում էական տարբերություններ ուսումնական պլաններում չեն արձանագրվել, և փոփոխություններ չեն կատարվել: ՄՈՒՀ-ը բենչմարքինգ է իրականացրել նաև Լատվիայի Դաուգավպիլս քաղաքի և Լիտվայի Ուտենայի բժշկական քոլեջների «Քույրական գործ» կրթական ծրագրերի հետ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բենչմարքինգի արդյունքում քոլեջը որդեգրել է կուրսային աշխատանք ներկայացնելու փորձառությունը, որը ներդրվել է պիլոտային ձևաչափով:

Ինչ վերաբերում է ՄԿԾ-ների մշտադիտարկմանը, ապա ՄՈՒՀ-ը ներդրել է կրթական ծրագրերի մշակման, գնահատման և վերանայման ուղեցույց: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ տվյալ ուղեցույցը դեռևս լիարժեք կիրառություն չի գտել: Բացի այդ, ուղեցույցում բացակայում է հստակ տեղեկատվություն մշտադիտարկման գործընթացի պատասխանատու կառույցների, դրա իրականացման ժամկետների, ընթացակարգերի և կիրառվող գործիքակազմի վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի կրթական ծրագրերը և մոդուլային ծրագրերի բովանդակությունը շարունակաբար բարելավվում են՝

հիմնվելով ոլորտում գործող պրակտիկ մասնագետների փորձառության վրա։ ՄԿԾ-ների կատարելագործման նպատակով Քոլեջը նաև իրականացրել է բենչմարքինգ տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ, ինչը հնարավորություն է տվել կիրառելու որոշակի նորարարական փորձեր, հատկապես «Քույրական գործ» կրթական ծրագրում։ Այս համատեքստում փորձագիտական խումբը նշում է, որ տեղական հաստատությունների հետ համեմատական վերլուծությունները կարող են իրականացվել առավել խորքային մակարդակում՝ ընդգրկելով ուսանողների գնահատման առաջադրանքներն ու ձևաչափերը, դասավանդման գործընթացների իրականացումը, ուսումնական միջավայրի առկայությունը և այլ էական բաղադրիչներ՝ նպատակ ունենալով վերհանել և կիրառել կրթական լավագույն փորձը։ Միայն ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի պարզ համադրությունը կարող է ապահովել սահմանափակ արդյունավետություն, քանի որ բոլոր կրթական հաստատություններում ՄԿԾ-ները հիմնված են նույն պետական կրթական չափորոշիչների վրա։

ՄԿԾ-ների ճկունության ապահովման, ինչպես նաև ուսանողների մասնագիտական հետաքրքրությունների և աշխատաշուկայի նորարար մոտեցումներին ծանոթացնելու նպատակով նպատակահարմար է կրթական ծրագրերում ներդնել ընտրովի և նախասիրական առարկաներ։ Նման բաղադրիչների ներառումը կնպաստի ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը, ինչպես նաև կուժեղացնի կրթական ծրագրերի ճկունությունն ու համապատասխանությունը աշխատաշուկայի շարունակաբար փոփոխվող պահանջներին։

Քոլեջի դասախոսական կազմը լայնորեն կիրառում է ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսումնառության միջավայրի ձևավորմանը։ Մասնագիտական գործնական (պրոցեդուրալ) հմտությունների ձևավորման նպատակով ուսանողները ներգրավվում են սիմուլացիոն և գործնական պարապմունքների, որոնք որոշ կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվում են նաև գործատու կազմակերպությունների մասնագիտացված բազաներում, նման մոտեցումը նպաստում է ուսանողների մոտ գործնական կարողությունների ձևավորմանը։ Ուսանողի գնահատման տեսանկյունից, փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ը կարիք կունենա ներդնել հանձնարարականների միասնական շտեմարան, որը կներառի ուսանողներին տրվող առաջադրանքները (այդ թվում՝ check list-երը), գնահատման չափանիշներն ու ձևաչափերը։ Այսպիսի շտեմարանի առկայությունը հնարավորություն կտա ՄՈՒՀ-ին ձևավորել համապարփակ բազա, որը հետագայում ընդլայնելու և բարելավելու պարագայում կբարելավի ուսումնական գործընթացների պլանավորման, իրականացման և գնահատման համահունչությունն ու արդյունավետությունը՝ ապահովելով նաև կրթական փորձի փոխանցելիություն տարբեր ժամանակահատվածներում և անձնակազմի փոփոխությունների պայմաններում։

Դրական է, որ Քոլեջը շարունակաբար ջանքեր է գործադրում պրակտիկաների վայրերի բազմազանեցման ուղղությամբ, ինչի արդյունքում ուսանողները բոլոր միջին մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում հնարավորություն ունեն պրակտիկաներ անցնելու ճանաչված բժշկական կազմակերպություններում։ Միևնույն ժամանակ, պրակտիկաների կազմակերպման և վերահսկման գործընթացում փորձագիտական խումբը նկատում է, որ

ուսանողների պրակտիկան միայն մեկ աշխատակցի կողմից վերահսկելը կարող է պարունակել ռիսկեր՝ կապված վերահսկման արդյունավետության նվազման, ուսանողների առաջընթացի վերաբերյալ ամբողջական պատկեր չունենալու, ինչպես նաև ուսանողներին մեթոդական աջակցություն տրամադրելու սահմանափակ հնարավորությունների հետ: ՄՈՒՀ-ն կարող է պրակտիկաների վերահսկման գործընթացում ներգրավել նաև մասնագիտական դասախոսներին, ինչը կնպաստի ինչպես ուսանողների պրակտիկաների արդյունավետ վերահսկմանը, այնպես էլ մասնագիտական դասախոս-գործատու կապի ամրապնդմանը և պրակտիկաների բովանդակության շարունակական բարելավմանը: Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել ուսանողների պրակտիկաների գնահատումը՝ ըստ մոդուլային ծրագրերի արդյունքների և այցելվող կլինիկաների պրոֆիլային առանձանահատկությունների, նման մոտեցումը հնարավորություն կըտա առավել վերահսկելի և թափանցիկ դարձնել պրակտիկաների կազմակերպումը և դրա գանահտումը:

ՄԿԾ-ների մշտադիտարկման գործընթացը ներկայումս հիմնականում իրականացվում է ոչ համակարգված ձևով, և փորձագիտական խումբը գնահատում է, որ ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտություն ունի վերանայելու առկա ուղեցույցը, կամ մշակելու առանձին մշտադիտարկման և վերանայման կանոնակարգ: Նման փաստաթղթում նպատակահարմար է հստակ ներկայացնել մշտադիտարկման բովանդակությունը՝ սահմանելով պատասխանատու կառուցվածքային միավորները, գործընթացի պարբերականությունը, կիրառվող գործիքակազմը և ընթացակարգերը, ինչը կապահովի գործընթացի ինստիտուցիոնալացված և շարունակական բնույթը՝ նպաստելով կրթական ծրագրերի կայուն բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄԲՔ-ի կողմից իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչների պահանջներին և շարունակաբար վերանայվում ու բարելավվում են՝ հիմնվելով գործատուների կարիքների վրա, ձևավորվել են արդյունավետ համագործակցային մեխանիզմներ գործատուների հետ՝ ուսանողների գործնական և պրակտիկ հմտությունների ձևավորման ուղղությամբ, դասավանդման գործընթացում կիրառվում են վերջնարդյունք ձևավորող մեթոդներ, ուսանողներին առաջադրվում են վերջնարդյունքահենք հանձնարարականներ, փորձեր են կատարվել բենչմարքինգի իրականացման ուղղությամբ և տեղայնացվել են որոշակի լավագույն փորձեր, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **բավարարում է** չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջում ընդունելությունը կատարվում է ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված մասնագիտությունների և սահմանային տեղերի համաձայն: Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ՝ այցեր դպրոցներ, բաց դռների օրեր: Ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով, դիմորդները քննություն են հանձնում Կենսաբանություն առարկայից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է նաև նախապատրաստական 3-ամսյա անվճար դասընթացներ ապագա դիմորդների համար, ովքեր իրենց կրթությունը շարունակելու են Մեհրաբյան քոլեջում:

Քոլեջի կողմից հատկացվում է ուսման վճարի փոխհատուցում երկկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկի երեխա ուսանողներին և այն ուսանողներին, որոնց ծնողներից որևէ մեկը աշխատում է քոլեջում: Ըստ քոլեջի մասնագիտությունների՝ ուսման վճարի փոխհատուցման քանակը անփոփոխ է և համարժեք է վարձի 15%-ին:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին Քոլեջում արձանագրվել է ուսանողների թվաքանակի կայուն աճ: Մասնավորապես, 2020-2021 ուսումնական տարում հաստատությունում ուսանել է 233 ուսանող, 2022-23թթ.՝ 313 ուսանող, իսկ 2023-2024 ուսումնական տարում վերջիններիս թիվը կազմել է 351: 2020-2021-ից մինչև 2023-2024 ուսումնական տարիների ընթացքում ուսանողների ընդհանուր թիվը աճել է 118-ով:

Վերջին 3 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ Քոլեջից ուսանողների հեռացումները կազմում են 54 ուսանող: Ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են՝ ուսման վարձի վճարման դժվարությունը, անհարգելի բացակայությունները, անբավարար առաջադիմությունը, ինչպես նաև արտագաղթը: Հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջում կուրսղեկների կողմից իրականացվում են անհատական զրույցներ, քննարկումներ ուսանողների և նրանց ծնողների հետ:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է որակի ապահովման կենտրոնի և կուրսղեկների միջոցով: Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում անանուն հարցումները, ֆոկուս խմբային քննարկումները և «Արագ արձագանքման արկղիկը», որոնք տեղադրված են երկու մասնաճյուղերում: Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է նաև ՈՒԽ-ն: ՈՒսանողների վերհանված կարիքներից են եղել անգլերենի դասաժամերի, գործնական պարապմունքների ավելացումը, քոլեջի տարածքի վերանորոգումը և այլն: Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված կարիքները հիմնականում Քոլեջի կողմից կյանքի են կոչվել:

Իսկ ինչ վերաբերում է լրացուցիչ դասընթացներին և խորհրդատվություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ Քոլեջում իրականացվում են միայն նախաքննական

խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց։ Ընթացիկ խորհրդատվություններ դասախոսների կողմից տրամադրվում են ըստ ուսանողի նախաձեռնության և կարիքի, օրինակ՝ բացակայելու դեպքում։ ՄՈՒՀ-ը, որպես այդպիսին, լրացուցիչ պարապմունքներ ուսանողների համար չի կազմակերպում, սակայն անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը, համագործակցելով Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ, ուսանողների համար հնարավորություններ է ստեղծում ներգրավվելու անվճար անգլերենի պարապմունքներում, փորձագիտական այցի ընթացքում անվճար պարապմունքներում ներգրավված ուսանողների քանակը եղել է 5-ը։ Քոլեջը նաև աջակցում է ուսանողներին ներգրավվելու հիվանդանոցներում կամավորական աշխատանքներում՝ կցվելով բուժանձնակազմին։ Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը և նրանց 91%-ն ընդգրկված է այս պարապմունքներում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով։ Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, ըստ որի ուսանողների 94%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 89%-ը բավարարված է այդ ծառայություններից։

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է պրակտիկայի կազմակերպման, կարիերայի, արտաքին կապերի և միջազգայնացման ստորաբաժանում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ստորաբաժանումը հիմնականում կենտրոնացված է գործատուների շրջանակի մեծացման, շրջանավարտների աշխատանքի վրա։ Իսկ ուսանողների կարիերայի նախապատրաստման ուղղված աշխատանքները (CV գրել, հարցազրույցի պատրաստվել և այլն), ինչպես նաև շրջանավարտների բազայի հավաքագրումը տեղի է ունենում ուսումնական մասի կողմից։ Անհրաժեշտ է նշել, որ քոլեջը համագործակցելով գործընկերների հետ և տեղեկանալով թափուր աշխատատեղերի վերաբերյալ, դրանց մասին տեղեկացնում է ուսանողներին Քոլեջում փակցված հայտարարությունների, ինչպես շրջանավարտների համար կազմված սոցցանցերի ներքին խմբերի միջոցով։ Քոլեջը կնքել է 9 համաձայնագրեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ։

Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2021թ. շրջանավարտների 91%-ն անցել են աշխատանքի, որոնցից 75%-ը՝ իրենց մասնագիտությամբ, 2022թ. շրջանավարտների 75%-ն անցել են աշխատանքի, որոնցից 80%-ը՝ իրենց մասնագիտությամբ, 2023թ. շրջանավարտների 76%-ն անցել են աշխատանքի, որոնցից 85%-ը՝ իրենց մասնագիտությամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան։

Ինչ վերաբերում է ուսանողների իրավունքների պաշտպանությանը, անհրաժեշտ է նշել, որ Քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ, որում հիմնականում ընդգրկված են կուրսերի ավագները, ինչպես նաև այն ուսանողները, ովքեր ցանկություն են հայտնել ներգրավվել խորհրդի

կազմում: ՈւԽ-ն համագործակցում է պրակտիկայի կազմակերպման, կարիերայի, արտաքին կապերի և միջազգայնացման ստորաբաժանում, կուրսղեկների և արտաքին շահակիցների հետ: Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: ՈւԽ-ի անդամները իրազեկում են ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, քննարկումներ ունենում ուսանողների հետ իրենց խնդիրների վերաբերյալ, կազմակերպում տարբեր միջոցառումներ, օրինակ՝ բեմադրություններ, ինտելեկտուալ խաղերի կազմակերպում և այլն: ՈւԽ-ից բացի քոլեջում գործում է նաև ուսանողական ուղեցույց, որտեղ սահմանված են ուսանողների պարտականությունները և իրավունքները:

Ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետության գնահատումը հիմնականում տեղի է ունենում հարցումների միջոցով, որոնք իրականացվում են Որակի ապահովման կենտրոնի կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄԲՔ-ում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ կանոնակարգեր և մեխանիզմներ: Գովելի է հատկապես նախաքննական փուլում կազմակերպվող անվճար պարապմունքների իրականացումը Կենսաբանություն առարկայից, ինչը կարող է նպաստել դիմորդների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը և քոլեջ մուտք գործող ուսանողների որակական կազմի ապահովմանը: Հատկանշական է նաև այն, որ ՄՈՒՀ-ում վերջին տարիներին նկատվում է ուսանողների կայուն աճ, ինչը ցույց է տալիս ուսանողների հավաքագրման արդյունավետ մեխանիզմների մասին:

Դրական է, որ Քոլեջում ուսանողներին որոշակիորեն մատուցվում են խորհրդատվական ծառայություններ, սակայն վերջիններս հիմնականում իրականացվում են ուսանողների նախաձեռնությամբ և կրում են ոչ համակարգված բնույթ: Հաշվի առնելով, որ բժշկական կրթությունը պահանջում է գիտելիքի աստիճանական և հաջորդական կուտակում, որտեղ նոր թեմաների յուրացումը հնարավոր է միայն նախորդ թեմաների լիարժեք ըմբռնման պայմաններում, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողի բաց թողնված ուսումնական նյութը պարտադիր պետք է լրացվի՝ հստակ սահմանված ժամանակացույցի շրջանակում: Նման մոտեցումը կխթանի ուսանողների առաջադիմության բարձրացմանը, ինչպես նաև բացակայությունների քանակի նվազեցմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գովելի է համարում այն, որ Քոլեջը, համագործակցելով այլ ուսումնական հաստատությունների և գործընկեր կազմակերպությունների հետ, ապահովում է ուսանողների մասնակցությունը լրացուցիչ դասընթացներին և կամավորական աշխատանքների: Նման նախաձեռնությունները նպաստում են ուսանողների մասնագիտական կարողությունների, փոխանցելի հմտությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը, լինելով մասնավոր ուսումնական հաստատություն և չունենալով պետական աջակցություն, ներդրել է ուսանողներին ֆինանսական աջակցության տրամադրման մեխանիզմներ, մասնավորապես՝ ուսման վարձի

զեղչերի տեսքով, այս մոտեցումն ապահովում է ուսանողների մոտիվացիայի և առաջադիմության բարձրացմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում գործում է պրակտիկայի կազմակերպման, կարիերայի, արտաքին կապերի և միջազգայնացման ստորաբաժանում, որն աջակցում է շրջանավարտներին աշխատանք գտնելու հարցում: Գովելի է, որ շրջանավարտներն ունեն մասնագիտական զբաղվածության բարձր մակարդակ, ինչը դիտարկվում է որպես գործնական ցուցիչ ուսումնական հաստատության կողմից շնորհվող որակավորումների արժանահավատության և աշխատաշուկայում դրանց ճանաչելիության առումով: Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին կարիերայի զարգացման և կողմնորոշման ուղղությամբ աջակցություն ցուցաբերելուն, ապա փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ աշխատանքները կարող են առավել ինտենսիվ և համակարգված բնույթ ստանալ: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ը կարող է կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ և փորձի փոխանակման միջոցառումներ, որոնց շրջանակում ուսանողները հնարավորություն կունենան շփվելու իրենց մասնագիտության ոլորտում հաջողության հասած մասնագետների հետ, ծանոթանալու ոլորտի այլ գործատուների հետ և այլն: Նման նախաձեռնությունները կարող են խթանել ուսանողների մասնագիտական մոտիվացիան, ընդլայնել նրանց կարիերայի պլանավորման հորիզոնները:

Խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ Ուսանողական խորհուրդը, որը ակտիվորեն ներգրավված է քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում: Խորհուրդն իր նախաձեռնություններով աջակցում է ուսանողների կրթական կարիքների վերհանմանը, մասնակցում է կազմակերպչական աշխատանքներին նպաստելով ուսանողական կյանքի ակտիվացմանը: Քոլեջում գործում են նաև ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման մեխանիզմներ, որը կարող է նպաստել այդ ծառայությունների հետագա բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է ուսանողների հավաքագրման արդյունավետ մեխանիզմ, դիմորդների հետ իրականացվում են նախապատրաստական անվճար դասընթացներ, առկա են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ և դրանց լուծման ուղիներ, ապահովված են կարիերային աջակցման ծառայություններ, շրջանավարտներն ունեն մասնագիտական բարձր զբաղվածություն, ուսանողների համար ստեղծված է անգլերեն պարապմունքներից օգտվելու հնարավորություն, գործում է իրավունքների պաշտպանության մարմին, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ ՄՈՒՀ-ի 2021-2025թթ ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է «ստեղծել մասնագիտական և մանկավարժական հմտություններով, բարձր որակավորումներով օժտված պրոֆեսորադասախոսական կազմ»: Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում սահմանվել են հետևյալ քայլերը՝ Մշակել և ներդնել դասախոսական անձնակազմի, հատկապես, երիտասարդ կադրերի խրախուսման գործուն մեխանիզմներ, Կատարելագործել դասախոսների գնահատման և կարիքների վերհանման գործիքակազմը (հարցումների, դասալսումներ), քայլեր ձեռնարկել դասախոսական անձնակազմի մանկավարժական և մասնագիտական պարբերական վերապատրաստումների ապահովման ուղղությամբ, քայլեր ձեռնարկել դասախոսական անձնակազմի փոխարինելիության ապահովման ուղղությամբ:

Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ «ՄԲՔ բժշկական քոլեջի դասախոսի ընտրության» կանոնակարգի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ: Մրցույթի ընթացքում հաշվի է առնվում մասնակցի կրթությունը, մասնագիտական և մանկավարժական փորձառությունը, օտար լեզվի իմացությունը, համակարգչային հմտությունները և այլն: Ըստ Քոլեջի տրամադրած տվյալների՝ վերջին երեք տարում ընդունվել է 20 նոր դասախոս: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բոլոր դասախոսների հետ կնքվում է ժամավճարային մեկ տարվա պայմանագիր:

Ըստ կրթական ծրագրերի դասախոսի առջև հատուկ պահանջներ առկա չեն, ՄՈՒՀ-ը հաշվի է առնում միայն ՊԿՉ-ով և դասախոսի պաշտոնի անձնագրով պահանջները: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը կարևորում է պրակտիկ ոլորտի և գործատու դասախոսների ներգրավումը, որոնք ներկայացնում են աշխատաշուկայի պահանջները: Քոլեջում դասավանդում են 44 դասախոս, որոնցից 43-ը ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական: Ներկայումս քոլեջի դասախոսներից 1-ը քոլեջի շրջանավարտ է, 4-ը գործատուներ, իսկ 19-ը պրակտիկ ոլորտի մասնագետներ, որոնք ներկայացնում են տարբեր բժշկական կենտրոններ, հետազոտական ինստիտուտներ: Անհրաժեշտ է նշել, որ նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խումբը տրամադրել էր խորհրդատվություն՝ դասախոսական կազմը համալրելու գործնական և լաբորատոր աշխատանքային փորձ ունեցող մասնագետներով:

Դասախոսական կազմում գիտական աստիճան ունեն 14%-ը, որից՝ 11%-ը գիտությունների թեկնածու է, 3%-ը՝ գիտությունների դոկտոր: Հիմնական և համատեղությամբ դասավանդողների տոկոսային հարաբերակցությունն ունի հետևյալ պատկերը. հիմնական՝ 41% (18 դասախոս), համատեղությամբ՝ 59% (26 դասախոս):

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին, բացառությամբ 1 դեպքի, երբ բանասերը դասավանդում է Համակարգչային օպերատորություն և ինֆորմատիկա: Անհրաժեշտ է նշել, որ նշված դասավանդողը ունի այդ ոլորտում մոտ 20 տարվա աշխատանքային փորձառություն[7]: Դասախոսական կազմը դասավանդում է նվազագույնը 1 առարկա, իսկ առավելագույնը՝ 8, վերջինս մասնագիտական մոդուլներ են:

Դասախոսական կազմի գնահատման համար 2022 թվականին քոլեջում հաստատվել է «Դասախոսների մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման ընթացակարգը»: Համաձայն ընթացակարգի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին դասախոսները լրացնում են գնահատման ձևաթերթեր, որոնք ներառում են որոշակի ցուցանիշներ՝ արտացոլելով դասախոսի աշխատանքային ձեռքբերումները, օրինակ՝ գիտական աստիճանի և կոչման առկայություն, հրատարակած աշխատություններ, մասնակցություն կոնֆերանսների, սեմինարների և վերապատրաստումների, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարում, բաց դասերի անցկացում և այլն: Արդյունքները վերլուծվում են ուսումնական մասի կողմից և ներկայացվում են տնօրենին և ցիկլային հանձնաժողովների նախագահներին: Վերլուծության արդյունքները կիրառվում են դասախոսների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը միտված որոշումների կայացման համար, ինչպես նաև ցուցիչ են ծառայում դասախոսների հետ պայմանագրերի վերակնքման կամ խզման համար:

Դասախոսների գնահատումն իրականացվում է նաև որակի ապահովման կենտրոնի կողմից ուսանողների շրջանում անանուն հարցումների միջոցով, որոնք առավելապես վերաբերում են ուսանողների գոհունակությանը: Գնահատման ևս մեկ մեխանիզմ է դասալսումների անցկացումը: Դասալսումների կարգը սահմանված է Դասախոսների մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման ընթացակարգում: Դասալսումներ հիմնականում իրականացվում են ուսումնական մասի, որակի ապահովման կենտրոնի և ցիկլային հանձնաժողովների կողմից: Դասալսումները կարող են լինել պլանավորված և ոչ պլանավորված: Չպլանավորված դասալսումներ իրականացվում են սկսնակ դասախոսների մոտ մասնագիտական և մանկավարժական որակները գնահատելու, անհրաժեշտության դեպքում մեթոդական աջակցություն տրամադրելու համար: Չպլանավորված դասալսումներ կարող են նաև իրականացվել դասախոս-ուսանող տարաձայնությունների առկայության դեպքում: Երբեմն անց են կացվում նաև անհատական փոխադարձ դասալսումներ, որոնք, սակայն, կանոնակարգված չեն, ինչպես նաև պարբերական բնույթ չունեն: Դասալսումները իրականացվում են «Դասավանդման մշտադիտարկման և գնահատման ձևաթերթ»-ի միջոցով: Արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում:

ՄՈՒՀ-ը 29.08.2023թ. ներդրել է նաև «ՄԲՔ ՍՊԸ դասախոսների որակական չափանիշների գնահատման տարբերակված համակարգի կանոնակարգը», որ համաձայն՝ հաշվի առնելով դասախոսի գիտական աստիճանը, գործատու լինելու հանգամանքը, սահմանվել է

[7] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկման հիման վրա:

աշխատավարձի վճարման տարբերակված մոտեցում, մեկ ժամի համար դասախոսը վարձատրվում է 1300-ից մինչև 2500 դրամ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Քոլեջի ղեկավար անձնակազմը կարևորում է աշխատակիցների աշխատավարձերի շարունակական բարձրացումը:

Ինչ վերաբերում է մասնագիտական և մեթոդական ուղղությամբ դասախոսների կարողությունների զարգացմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների ընթացքում փորձագիտական խմբի կողմից արձանագրվել է դասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական ուղղվածությամբ պարբերական վերապատրաստումների իրականացման անհրաժեշտությունը: Ուսումնասիրությունները փաստում են, որ 2021-2025 թվականների ընթացքում քոլեջի դասախոսական կազմի վերապատրաստման գործընթացը ունեցել է հետևյալ դինամիկան. ՄՈՒՀ-ի 6 դասախոսներ մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստման ծրագրերին: Քոլեջի կողմից կազմակերպվել և իրականացվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և MS OFFICE փաթեթի իրավասու օգտագործումը» դասընթացը, ինչպես նաև «Ոչ ֆորմալ կրթություն» անվամբ վերապատրաստման ծրագիրը՝ ուղղված դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, որին մասնակցել է 19 դասախոս: Բացի այդ, օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով իրականացվել են դասընթացներ 2024 թվականի դեկտեմբերի 20-ից 2025 թվականի հունվարի 27-ն ընկած ժամանակահատվածում: Բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարում ընդհանուր ծախսերի 0.7%-ը տրամադրվել է վերապատրաստումներին:

Մասնագիտական վերապատրաստումների ուղղությամբ քոլեջը նախաձեռնությամբ հանդես չի եկել: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ քոլեջի դասախոսների մեծ մասը ոլորտի փորձառու մասնագետներ են, ովքեր իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում մասնակցում են տարբեր վերապատրաստումների, հանդիպումների և սեմինարների: Բացի այդ, դասախոսների մի մասն էլ հենց իրենք են հանդիսանում տարբեր սեմինարիների բանախոսներ:

Ինչ վերաբերում է սկսնակ դասախոսներին աջակցության տրամադրմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ Քոլեջում գործում է մենթորության մշակույթ, որը կանոնակարգվում է 2022 թվականին ընդունված «ՄԲՔ» ՍՊԸ-ի սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությամբ: Սույն քաղաքականության շրջանակներում քոլեջի կայացած և փորձառու դասախոսները ուղղորդում, օժանդակում և խորհրդատվություն են տրամադրում սկսնակ դասախոսներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սկսնակ դասախոսները հիմնականում ուղղորդում են ստանում մոդուլային ծրագրերի կազմման, դասավանդման մեթոդների ընտրության, լսարանի ճիշտ կառավարման ուղղությամբ:

ՄԲՔ-ում դասախոսական և վարչական կազմի կայունության երաշխիքներից է աշխատանքի վարձատրության դինամիկ աճը՝ վերջին 5 տարիների ընթացքում այն գրեթե կրկնակի աճ է գրանցել: Հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո դասախոսական կազմը երիտասարդացման միտում է գրանցել՝ նախկին 58 տարեկանի փոխարեն ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 55 է: Վերջին 4 տարիների ընթացքում աշխատանքից

ազատվողների և աշխատանքի ընդունվողների թիվը 2-ը 10-ի հարաբերակցություն ունի:Քոլեջում գործում է դասախոս թեկնածուների բազա:

Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրություններով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը շարունակական և արդյունավետ աշխատանքներ է տանում իր դասախոսական կազմը մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսներով համալրելու ուղղությամբ: Գովելի է նաև, որ քոլեջը քայլեր է իրականացնում դասախոսական կազմը գործատու ներկայացուցիչներով և պրակտիկ ոլորտի մասնագետներով համալրելու ուղղությամբ, ինչը նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացմանը և մասնագիտական մոդուլների դասավանդման որակի բարելավմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է այս քաղաքականության շարունակականության ապահովումը:

Դրական է, որ դասախոսական անձնակազմի գնահատման համար քոլեջում առկա են մի շարք մեխանիզմներ, մասնավորապես՝ դասախոսների մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման գործընթացը սահմանված ցուցանիշների հիման վրա, ինչը կարող է նպաստել կադրերի գործունեության արդյունավետության բարձրացմանը և ցուցանիշների հիման վրա օբյեկտիվ որոշումների կայացմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից սահմանված դասախոսների աշխատանքի գնահատման ընթացակարգում ներառված որոշ ցուցանիշներ, մասնավորապես՝ գիտական աստիճանի և կոչման առկայությունը, գիտական հրապարակումները, առավելապես բնորոշ են բուհական մակարդակին: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս ցուցանիշները կարող են մասնակիորեն պահպանվել՝ որպես խրախուսման գործիք այն դասախոսների համար, ովքեր ցանկանում են զարգացնել ակադեմիական ներուժը, սակայն անհրաժեշտ է, որ հիմնական շեշտադրումը դրվի քոլեջային մակարդակին համապատասխանող ցուցանիշների վրա, ինչպիսիք են՝ դասավանդման արդյունավետությունը, գործնական աշխատանքների կազմակերպումը, մասնագիտական վերապատրաստումներին մասնակցությունը, ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացմանն ուղղված գործունեությունը և այլն:

Փորձագիտական խումբը նաև փաստում է, որ քոլեջում տարբեր օղակների կողմից իրականացվող ընթացիկ դասալսումները կարևոր գործիք են հանդիսանում դասավանդման և ուսուցման գործընթացների վերահսկման և գնահատման համար: Դասալսումների արդյունքների դինամիկ վերլուծությունը հնարավորությունը հնարավորություն կընձեռի դուրս բերելու առկա խնդիրները, բացահայտել դասախոսական կազմի մասնագիտական որակների, կարիքների և պահանջների ամբողջական ու օբյեկտիվ պատկերը, ինչպես նաև ըստ այդ արդյունքների կազմակերպել համապատասխան վերապատրաստումներ: Չնայած այն հանգամանքին, որ քոլեջի դասախոսական կազմը մեծամասամբ կազմված է պրակտիկ ոլորտի մասնագետներից, ովքեր իրենց գործունեության շրջանակներում հնարավորություն ունեն զարգացնելու մասնագիտական կարողությունները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը կարող է աջակցել նաև այն

դասախոսներին, ովքեր նման հնարավորություն չունեն: Այս նպատակով նպատակահարմար է, որ ՄՈՒՀ-ն իր բյուջեում ավելացնի վերապատրաստումներին հատկացվող ֆինանսական միջոցները: Բացի այդ, փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների շրջանում դասավանդման լավ փորձի տարածման նպատակով քոլեջը կարիք ունի կանոնակարգելու և պարբերական դարձնելու փոխադարձ դասալսումները:

Իսկ ինչ վերաբերում է մեթոդական վերապատրաստումներին, ապա փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի դասախոսական անձնակազմի մասնակցությունը դրանցում, որոնք կարող են նպաստել ժամանակակից դասավանդման մեթոդների կիրառմանը և մոդուլային համակարգով դասավանդմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ունի հստակ մոտեցում աշխատակիցների աշխատավարձերի տարեցտարի բարձրացման և գնահատման արդյունքների հիման վրա խրախուսման մեխանիզմների կիրառման հարցում, ինչը նպաստում է դասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացմանը: Վերջին հինգ տարիների ընթացքում աշխատանքի վարձատրությունը գրեթե կրկնակի աճ է գրանցել: Կարևորվում է նաև տարբերակված աշխատավարձի վճարման կիրառումը, որը խթանում է գործատուների և պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավումը քոլեջի կրթական գործընթացներին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև դասախոսական կազմի երիտասարդացմանը միտված քոլեջի քաղաքականությունը, որը կապահովի դասախոսական կազմի սերնդափոխությունը և կերաշխավորի կրթական ծրագրերի իրականացման կայունությունը: Այս տեսանկյունից գնահատելի են նաև երիտասարդ դասավանդողների հետ տարվող աշխատանքները, նրանց մեթոդապես պատրաստելու և աջակցելու մանկավարժական անձնակազմի պատրաստակամությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄԲՔ-ն ունի համապատասխան դասախոսական կազմ բոլոր մոդուլների և առարկաների դասավանդման համար, առկա է պրակտիկ մասնագետներ ներգրավելու հստակ շեշտադրված քաղաքականություն, որն ապահովում է ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացումը, գործում են դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ, առկա է դասախոսական կազմի ռեզերվ, մեկ մոդուլի դասավանդման համար հիմնականում ներգրավված են երկու դասախոսներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարարում է** չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Հետազոտական աշխատանքների իրականացումը ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է: ՄՈՒՀ-ը սահմանել է նպատակ՝ ամրապնդել ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցվածությունը: Նշված նպատակին հասնելու համար Քոլեջը ձևակերպել է երեք խնդիր և դրանց ուղղված քայլեր: Անհրաժեշտ է նշել, որ սահմանված խնդիրները բխում են նախորդ հավատարմագրման արդյունքում նշված խորհրդատվություններից, դրանք են՝

1. բարելավել ուսանողներին տրամադրվող հետազոտական աշխատանքների թեմաները՝ ներառելով նաև աշխատաշուկայի պահանջներից բխող թեմաներ,
2. ապահովել Քոլեջի տարբեր միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուսանողների համար հավասար պայմաններ հետազոտական աշխատանքների իրականացման նպատակով,
3. մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետազոտական գործունեության խրախուսման համապատասխան մեխանիզմներ:

Ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորման և զարգացման նպատակով ՄՈՒՀ-ը մշակել և ներդրել է ավարտական աշխատանքների կազմման ուղեցույց: Հետազոտական գործունեության ակտիվացման շրջանակում ՄՈՒՀ-ը 2024-25 ուսումնական տարում «Քույրական գործ» կրթական ծրագրում որոշում է կայացրել, բացի ավարտական բանավոր քննություններից, փորձարարական ձևաչափով ներդնել կուրսային աշխատանքների իրականացումը: Այս նպատակով համապատասխան մասնագիտական ցիկլային հանձնաժողովների կողմից մշակվել է թեմաների ցանկ: Կուրսային աշխատանքներում ուսանողի ինքնուրույն հետազոտական աշխատանքը կապվելու է վերջին կուրսում պրակտիկաների հետ:

ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքը ներառված է մասնագիտական և ոչ մասնագիտական մոդուլների բովանդակության մեջ՝ որպես դրանց բաղկացուցիչ տարր: ՄՈՒՀ-ում որոշ մոդուլների շրջանակներում սահմանված են նաև ռեֆերատների հաստատված ցանկ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում: Ուսանողները պատրաստում են ռեֆերատներ, ինքնուրույն աշխատանքներ և ներկայացում տեսասահիկների միջոցով: Աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա են ռեֆերատներ, որոնցում ուսանողները ներկայացնում են ոչ միայն տեսական նյութի ուսումնասիրություն, այլև իրականացնում են ինքնուրույն փոքրածավալ հետազոտություն՝ հիմնված պրակտիկայի ընթացքում կատարված դիտարկումների վրա, ձևակերպում են վերլուծական եզրակացություններ և ներկայացնում համապատասխան գրականության ցանկ: Օրինակ՝ ուսանողն իրականացրել է ռադիոլոգիայի ոլորտում կիրառվող բժշկական սարքերի համեմատական վերլուծություն, որտեղ ներկայացրել է

վերլուծություն, ձևակերպել է եզրակացություններ և ներառել է համապատասխան գրականության ցանկ: Միևնույն ժամանակ, արձանագրվել են նաև աշխատանքներ, որոնք հիմնականում հիմնված են սոցիալական ցանցերից կամ ոչ ակադեմիական աղբյուրներից կատարված արտատպումների վրա և չեն ներառում վերլուծական կամ ստեղծագործական բաղադրիչ: ՄՈՒՀ-ում առկա չեն ռեֆերատների և ինքնուրույն աշխատանքների պատրաստման և ներկայացման համար սահմանված հստակ մեթոդական պահանջներ:

Իսկ ինչ վերաբերում է դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներին, անհրաժեշտ է նշել, որ Քոլեջը տարեկան 2 անգամ հրատարակում է «Գիտական տեղեկագիր», որտեղ ներկայացվում են հայ և օտարազգի գիտնականների տեսական և գործնական հոդվածները: Անհարժեշտ է նշել, որ խրախուսման նպատակով քոլեջի դասախոսները կարող են իրականացնել անվճար տպագրություն տեղեկագրում: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի մի մասը տարբեր հետազոտական ինստիտուտների աշխատակիցներ են և ունեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու փորձառություն: Անհրաժեշտ է նաև նշել, որ Տեղեկագրում ներկայացված տպագրությունները հիմնականում վերաբերում են տվյալ աշխատակցի գիտահետազոտական գործունեությանը, սակայն վերջին տարիներին առկա են նաև տարբեր հոդվածներ, որոնք վերաբերում են միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ հիմնախնդիրների լուծմանը: Իսկ ինչ վերաբերում է իրականացված հետազոտությունների և ուսումնառության գործընթացի փոխկապակցվածությանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ այն հետազոտությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են միջին մասնագիտական կրթության խնդիրներին, կիրառվում են ուսումնական գործընթացում՝ որպես ուսումնառության նյութ: Այս համատեքստում որպես օրինակ կարող են նշվել «Լատիներեն լեզու և բժշկական տերմինաբանության հիմունքներ» գիրք-աշխատատետրը, «Հիվանդի վիճակի քույրական գնահատումը» և այլ ուսումնական նյութեր, որոնք մշակվել են դասախոսական կազմի կողմից և ներառվել են ուսուցման գործընթացում:

Քոլեջի դասախոսները և ուսանողները նաև ներկայացրել են իրենց հետազոտությունները արտերկրում, սակայն փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ նշված հետազոտական նախագծերի իրականացման գործընթացում ուսանողների ներգրավվածությունը սահմանափակ է եղել, և վերջիններս հիմնականում հանդես են եկել որպես դիտորդ, այլ ոչ թե որպես ակտիվ հետազոտական գործընթացի մասնակիցներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը հետազոտական գործունեության բարելավման ուղղությամբ: Նախորդ հավատարմագրման գործընթացի համեմատ ընդլայնվել է հետազոտությունների ծավալը, ներկայումս ավելի շատ դասախոսներ և ուսանողներ են ընդգրկվել հետազոտական աշխատանքում, ինչը խոսում է Քոլեջում հետազոտական մշակույթի աստիճանական ձևավորման մասին:

Դրական է, որ տարբեր մոդուլային ծրագրերի շրջանակում ուսանողները իրականացնում են ինքնուրույն ռեֆերատային աշխատանքներ, որոնք որոշ դեպքերում ներառում են նաև ուսանողի ինքնուրույն իրականացված պարզ հետազոտական բաղադրիչներ: Սակայն փորձագիտական

խումբը նշում է, որ ուսումնական հաստատությունում առկա է անհրաժեշտություն՝ ներդնելու ռեֆերատների կազմման հստակ ձևաչափային և բովանդակային պահանջներ: Նման պահանջների առկայությունը կնպաստի, որ ՄՈՒՀ-ում իրականացվող բոլոր աշխատանքներն իրենց մեջ պարունակեն ուսանողների վերլուծական և ինքնուրույն բաղադրիչը:

Գովելի են Քոլեջի ջանքերը դասախոսական կազմի համար աջակցման մեխանիզմների ձևավորման ուղղությամբ, մասնավորապես՝ «Տեղեկագիր»-ի պարբերական հրատարակումը, որը դասախոսներին տրամադրում է անվճար հրապարակման հնարավորություն: Նշված նախաձեռնությունը նպաստում է միջին մասնագիտական կրթության ոլորտում կիրառական հետազոտությունների տարածմանը, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրմանը և դրա ներառմանը կրթական գործընթացում: Փորձագիտական խումբը խրախուսում է, որ ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը շարունակաբար զարգացնի իր հետազոտական գործունեությունը միջին մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակում՝ միաժամանակ ապահովելով միջազգային լավագույն փորձերի ինտեգրումը ուսուցման բովանդակության մեջ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ուսանողները դասախոսների ուղղորդմամբ ներգրավվում են գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներում, ինչը նպաստում է նրանց վերլուծական մտածողության, հաղորդակցման և հետազոտական հետաքրքրությունների ձևավորմանը: Այնուամենայնիվ, խումբը նշում է, որ նման հնարավորությունները ներկայումս հիմնականում հասանելի են բարձր առաջադիմությամբ ուսանողներին: Այս համատեքստում նպատակահարմար է, որ ուսումնական հաստատությունը առավել շատ խթանի ուսանողների վերլուծական և հետազոտական գործունեության ավելի լայն ընդգրկումը՝ հնարավորություն ընձեռելով բոլոր ուսանողներին իրականացնել պարզ հետազոտական աշխատանքներ իրենց մասնագիտական ոլորտում՝ ներառյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն: Հետազոտական թեմաների ընտրության գործընթացում անհրաժեշտ է ապահովել դրանց պրակտիկ կիրառելիությունը ապագա մասնագիտական գործունեության համատեքստում՝ խթանելով ուսանողների մասնագիտական մտածողության և ինքնուրույն աշխատանքի կարողությունների զարգացումը: Հետազոտական գործունեության խթանման նպատակով նպատակահարմար է, որ բոլոր ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների շրջանակում տվյալների հավաքագրման աղբյուր հանդիսանան այն առողջապահական կազմակերպությունները, դեղատները և էսթետիկ կենտրոնները, որտեղ ուսանողները իրականացնում են իրենց գործնական և պրակտիկ աշխատանքները: Նման մոտեցումը թույլ կտա, որ բոլոր ուսանողները հնարավորություն ունենան իրականացնելու կիրառական նշանակության հետազոտություններ, վերջինս կխթանի ուսումնառության և իրական աշխատանքային միջավայրի միջև կապը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում «Քույրական գործ» մասնագիտության շրջանակում կուրսային աշխատանքների ներդրումը՝ որպես ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման խթան, սակայն դրա արդյունավետությունը գնահատել այս փուլում դեռևս հնարավոր չէ, քանի որ արդյունքները հնարավոր կլինի վերլուծել միայն ուսումնական տարվա ավարտին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄԲՔ-ն ունի հետազոտական ուղղությամբ ռազմավարական հետաքրքրություն, դասախոսական կազմը հրապարակում է զգալի թվով գիտական աշխատանքներ, քոլեջն ունի գիտական տեղեկագիր, որտեղ դասախոսներն ունեն անվճար տպագրվելու հնարավորություն, տեղեկագրում հրապարակված աշխատանքները որոշակիորեն նաև վերաբերում են քոլեջում իրականացվող կրթական ծրագրերին, ուսանողներին հանձնարավում են ռեֆերատային աշխատանքներ, որոնք երբեմն ունեն հետազոտական բնույթ, որոշ դասախոսներ իրենց հետազոտական նախագծերում ներգրավում են նաև ուսանողներին, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիանալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Քոլեջն իր գործունեությունը իրականացնել է սեփական տարածքներում, որոնք տեղակայված են երկու հասցեներում՝ Հրաչյա Քոչար 21 և Կոմիտաս 51: Անհրաժեշտ է նշել, որ Հրաչյա Քոչար 21 հասցեում գտնվող բոլոր լսարանները վերանորոգվել են: Քոլեջի տրամադրության տակ է 510 մ² ընդհանուր լսարանային տարածք, ՄՈՒՀ-ը գտնվում է բժշկական հաստատության ներսում: Քոլեջն ունի ընդհանուր 27 լսարան, որոնցից 18-ը նախատեսված են տեսական դասախոսությունների, իսկ 9-ը՝ գործնական պարապմունքների համար: Վարչական նպատակներով հատկացված է 4 սենյակ: Մասնագիտական լսարանները ընդգրկում են 1 համակարգչային լսարան, 2 ատամնատեխնիկական լաբորատորիա, 1 կոսմետոլոգիական, 1 դեղագործական, ինչպես նաև 3 լսարան՝ նախատեսված «Քույրական գործ» և հարակից մոդուլների համար (անատոմիա, վիրաբուժություն և այլն): Նշված մասնագիտական լսարաններն ընդհանուր առմամբ համալրված են անհրաժեշտ գույքով՝ բացառությամբ «Դեղագործություն» կրթական ծրագրի լաբորատոր տարածքի:

Քույրական գործ ՄԿԾ-ի մասնագիտական լսարաններից մեկը կահավորվել է վերջին տարիներին ժամանակից սիմուլացիոն մուլյաժներով, որոնք թույլ են տալիս ուսանողներին գործնականում իրականցնել վերակենդանացում, ներարկումներ, կաթետերիզացիա և այլն: Նշված մասնագիտական լսարնը ձեռք է բերվել 2022թ. Viva բարեգործական ընկերության միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջը կիրառում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Օրինակ ՀՀ ԳԱԱ Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ Օրբելու

անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի լաբորատորիաները և այլն, քանի որ ՄՈՒՀ-ը չունի համապատասխան լաբորատորիաններ՝ քիմիայի (Օրգանական քիմիա, Դեղագործական քիմիա, Ֆիզկոլոիդ քիմիա, ընդհանուր և անօրգանական քիմիա, Անալիտիկ քիմիա), ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաններ: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջում այս ուղղություններով դասավանդող վերը նշված կազմակերպությունների աշխատակիցներ են և հնարավորություն ունեն իրենց գործնական դասընթացները վարել այնտեղ: Միևնույն ժամանակ, ռեսուրսների դիտարկման և դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ Քոլեջն ունի մի շարք ուսումնամեթոդական նյութեր, պաստառներ և մասնագիտական սարքավորումներ, որոնց դասավորվածությունն տարբեր սենյակներում է և անկանոն, դրանք կենտրոնացված չեն մեկ միասնական սենյակում, որը կարող է ծառայել որպես մասնագիտական սենյակ, օրինակ՝ ֆիզիկա, քիմիա և այլն:

Համակարգչային լսարանն ունի 12 համակարգիչ, որոնք ձեռք են բերվել 2024թ . տեխնիկապես նոր են և ունեն համապատասխան ծրագրային ապահովում: Քոլեջն ունի 4 պրոյեկտոր՝ 3 շարժական և 1 անշարժ: ՄՈՒՀ-ն ունի նաև գրադարան, գրապահոց: Գրադարանը հագեցած է 6780 միավոր գրականությամբ, այդ թվում՝ 2230 մասնագիտական գրականություն, 4550 գեղավերստական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով և ռուսերենով է: Գրադարանը թվայնացված չէ:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023-2024 ուս տարվա կտրվածքով ընդհանուր ծախսերի 74%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, միջազգայնացման հետ կապված՝ 1,5%, գիտական և հետազոտական աշխատանքների համար՝ 2%, վերապատրաստումներ՝ 0,7%, Որակի կենտրոն և ուսումնական կառույց՝ 2%: Պահպանման ծախսեր՝ էլեկտրանէներգիա, ջեռուցում, կոմունալ և այլն՝ 13,5%: Ուսումնական ծախսեր՝ արենդավճարներ, պրակտիկա, նյութերի ձեռքբերում՝ 3,5%: Զարգացման ծախսեր՝ համակարգիչների, պրոյեկտորների ձեռքբերում՝ 5%, գովազդ՝ 1%, չնախատեսված ծախսեր՝ 3%:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պետական ֆինանսավորում չունի: 91%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը են: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան, որոնցից ներգրաված մուտքերը քիչ տեսակարար կշիռ ունեն քոլեջի բյուջեի եկամուտների կառուցվածքում՝ կազմելով շուրջ 1%: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն արձանագրվել է:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ med_mehrabyan@rambler.ru[8] : Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է հիմնականում թղթային տարբերակով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը Կոմիտաս 51 հասցեում չունի կենտրոնական ջեռուցման համակարգ (տարածքը ջեռուցվում է տաքացուցիչներով),

[8] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկման հիման վրա:

հակահրդեհային համակարգին ինչպես նաև տարհանման: Քոլեջն ունի միայն 2 կրակմարիչ, որոնք համապատասխան վայրերում փակցված չեն, այլ պահվում են վարչական սենյակներում: ՄՈՒՀ-ը չունի պահակակետ, սակայն տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ: Բացակայում են նաև թեքահարթակները, սակայն շենքում առկա է վերելակ, որը խափանված է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: Ինչ վերաբերում է Հրաչյա Քոչար 21 հասցեում գտնվող մասնաշենքին, ապա այն տեղակայված է բժշկական կենտրոնի տարածքում և ապահովված է համապատասխան ենթակառուցվածքներով ու անհրաժեշտ պայմաններով: Քոլեջն ունի բուժկետ, որը գտնվում է միայն Հրաչյա Քոչարի 21 մասնաճյուղում, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից:

2023-2024թթ. քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում: Շահակիցների ուսումնական ռեսուրսներից բավարարվածությունը գնահատվում է որակի կենտրոնի կողմից կատարված հարցումների միջոցով, որի վերլուծության արդյունքում շահակից կողմերը գրեթե 90%-ով բավարարված են ուսումնական միջավայրից, նյութատեխնիկական հագեցվածությունից:

Քոլեջի 2021-2025թթ. ՌԾ-ի խնդիրներից է վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը, արդյոք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բյուջեն բաշխվում է ըստ ֆինանսական մուտքերի և ծախսերի, որոնք համապատասխանում են քոլեջի ռազմավարական նպատակներին և առաքելության հիմնական ուղղություններին: Կազմվում է բյուջեի մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը: Բյուջեի մուտքերը ձևավորվում են ուսման վարձավճարներից, կարճաժամկետ դասընթացներից և որոշ սենյակների վարձակալությունից:

Դատողություններ: Դրական է, որ Քոլեջը հետևողական քայլեր է ձեռնարկել ուսումնական միջավայրի բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝ Հրաչյա Քոչար 21 հասցեում գտնվող լսարանների վերանորոգման և տեխնիկական վերազինման միջոցով՝ ապահովելով կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպում: Գովելի է, որ լսարանների արդիականացմանը զուգահեռ Քոլեջը ներդրել է ժամանակակից սիմուլացիոն սարքավորումներով հագեցած մասնագիտական սենյակ, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի կիրառական բաղադրիչի ամրապնդմանը և ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացմանը: Դրական է նաև, որ Քոլեջը իր սահմանափակ նյութատեխնիկական բազան լրացնում է գործընկեր կազմակերպությունների ռեսուրսների միջոցով, ինչի շնորհիվ հնարավոր է ապահովել ուսանողների գործնական պարապմունքների անցկացումը համապատասխան մասնագիտական միջավայրում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է նաև սեփական ռեսուրսային ներուժի ձևավորման անհրաժեշտությունը՝ ուսումնական գործընթացի ինքնաբավության և կայունության ապահովման նպատակով: Քոլեջն ունի մի շարք

ուսումնամեթոդական և մասնագիտական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ է համակարգել և կենտրոնացնել մասնագիտական լսարաններում: Բացի այդ, նպատակահարմար է համալրել մասնագիտական սենյակները անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով, ինչը հնարավորություն կընձեռի իրականացնել քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության տարրական փորձեր անմիջապես քոլեջի տարածքում՝ բարձրացնելով ուսուցման կիրառական և ինտեգրված բնույթը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնական միջավայրը, մասնավորապես՝ Կոմիտաս 51 հասցեում գտնվող մասնաշենքում, շարունակում է ունենալ բարելավման կարիքներ: Առանձնապես կարևոր է լսարանների վերանորոգումը, հակահրդեհային և տարհանման համակարգերի ստեղծումը, ինչպես նաև ներառական միջավայրի ապահովումը՝ կրթական միջավայրի մատչելիությունը բարձրացնելու նպատակով: Բացի այդ, քոլեջը կարիք ունի նաև թվայնացնելու գրադարանային ֆոնդը, նաև ձեռք բերելու ժամանակակից հայալեզու և օտարալեզու մասնագիտական գրականություն, վերջինս կնպաստի ուսումնական տեղեկատվության հասանելիությունը և ուսումնական միջավայրի ժամանակակից պահանջներին համապատասխանությունը:

Դրական է, որ Քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, ինչը վկայում է ուսումնական միջավայրի նկատմամբ հետևողական վերաբերմունքի և որակի ապահովման գործընթացում շահակից կողմերի ներգրավվածության մասին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո իրականացրել է որոշակի բարելավումներ ինչպես շենքային պայմանների, այնպես էլ թանկարժեք սիմուլացիոն սենյակի, համակարգիչների ձեռքբերման ուղղությամբ, ՄԿԾ-ների իրականացման համար կիրառվում են նաև գործատուների ռեսուրսները, առկա միջավայրը բավարարում է կրթական ծրագրերի իրականացման պահանջները, ՄՈՒՀ-ի ֆինանսական կառավարումը նպաստել է ֆինանսական շահութաբերության մեծացմանը, իրականացվում են ռեսուրսներից բավարարվածության գնահատումներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԲՔ-ն **բավարարում է** չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: ՄՈՒՀ-ում գործում է ներքևից վերև հաշվետվողականության համակարգ, որի շրջանակում քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունները՝ համաձայն ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով սահմանված ենթակայության: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ նախորդ հավատարմագրման գործընթացում ներկայացված խորհրդատվությունների հիման վրա Քոլեջը ձեռնարկել է քայլեր ստորաբաժանումների հաշվետվությունների ձևաչափի վերանայման ուղղությամբ՝ փորձելով ընդգրկել վերլուծական տարրեր, ինֆոգրաֆիկական լուծումներ (սխեմաներ, հիստոգրամմաներ և այլն): Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ առկա որոշ հաշվետվություններ (ամբիոններ, պրակտիկայի կազմակերպման, կարիերայի, արտաքին կապերի և միջազգայնացման ստորաբաժանման) դեռևս ամբողջովին չեն ապահովում խորքային վերլուծական մոտեցում և առավելապես ուղղված չեն ըստ ռազմավարական նպատակների:

Ըստ ինքնավերլուծության՝ բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և հիմնադիրների խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ հիմնադիրների խորհուրդը տնօրենի գործունեության գնահատման համար ցուցիչներ չի սահմանում: Տնօրենի հաշվետվությունը քննարկվում և լսվում են նաև Մանկավարժական խորհրդում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվությունները չեն կազմվում վերլուծական ուղղվածությամբ. փոխարենը ընդհանրացված ներկայացվում է ստորաբաժանումների հաշվետվությունների համախումբը: Բերված քանակական ցուցանիշները (այդ թվում՝ ընդունելության քանակ, ուսանողական համակազմի թիվ, շրջանավարտների զբաղվածության ցուցանիշներ) ներկայացվում են նախորդ տարվա համեմատությամբ՝ դրանով միայն ապահովելով վերլուծական որոշակի տարր: Վերջում ներկայացված SWOT վերլուծությունը նույնպես խորքային վերլուծություն չի պարունակում, այն չի տրամադրում ամբողջական պատկեր քոլեջի վերաբերյալ (օրինակ՝ որպես թույլ կողմեր նշված են միայն երկուսը. տորաբաժանումների երկարաժամկետ ռազմավարական պլանավորման մշակույթի բացակայություն, ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով ֆեյսբուքյան և ինստագրամյան սոցիալական հարթակները: Ֆեյսբուքյան հարթակում հետևորդների թիվը կազմում է 8400-ից ավ ելի, իսկ ինստագրամյան հարթակում՝ 1141: Քոլեջում գործում է նաև տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող պաշտոնական եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) կայքէջ (https://www.armmed.am), որտեղ առկա է տեղեկատվություն ուսանողների ընդունելության, քոլեջի կառուցվածքի, կանոնակարգերի, իրականացվող կրթական ծրագրերի, միջազգային համագործակցության և իրականացված միջոցառումների մասին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ կայքէջը ռուսերեն և անգլերոն լեզուներով

տեղեկատվությամբ լիարժեքորեն համալրված չէ։ Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի գործունեության թափանցիկության ապահովման գործիքներից են նաև քոլեջի կողմից հրատարակվող բուկլետները և ԶԼՄ-ները։

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցից շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում որպես հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմներ են կիրառվում ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը, ինչպես նաև քոլեջի կայքէջը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից իրականացվում են հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված որոշ նախաձեռնություններ։ Մասնավորապես, կազմակերպվում են անվճար նախապատրաստական դասընթացներ ապագա դիմորդների համար Կենսաբանություն առարկայից, կարճաժակետ ծրագրեր ներառական կրթության վերաբերյալ դպրոցի մասնագետների համար, ինչպես նաև Քոլեջի ուսանողները հասարակական հիմունքներով ներգրավվում են բժշկական հաստատություններում՝ մասնագիտական աջակցություն ցուցաբերելով բնակչությանը։ Բացի այդ, ՄՈՒՀ-ը ապահովում է իր կողմից հրատարակվող բժշկական «Տեղեկագրի» հասանելիությունը՝ հրապարակելով այն պաշտոնական կայքէջում, որի արդյունքում դասախոսական կազմի և այլ ոլորտային մասնագետների հեղինակած նյութերն ազատ հասանելի են ինչպես մասնագիտական համայնքի, այնպես էլ լայն հանրության համար։

Դատողություններ։ Դրական է, որ ՄԲՔ-ում ձևավորված է ներքևից վերև հաշվետվողականության կառուցվածք, ինչը հնարավորություն է տալիս կառուցվածքային ստորաբաժանումներին պարբերաբար ներկայացնել իրենց գործունեության արդյունքները՝ ապահովելով քոլեջի գործունեության թափանցիկությունը և կառավարման վերահսկելիությունը։ Գովելի է նաև, որ քոլեջը նախորդ հավատարմագրման արդյունքում ձեռնարկել է հաշվետվությունների ձևաչափի վերանայման ուղղությամբ որոշակի քայլեր՝ ներառելով վերլուծական տարրեր և դիագրամներ, ինչը կարող է նպաստել տվյալների համեմատական վերլուծության իրականացմանը, ինչպես նաև գործընթացների արդյունավետության գնահատմանը։ Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է, որ վերլուծական հաշվետվությունների մշակույթը ներդրվի բոլոր ստորաբաժանումներում։ Դրական է, որ Քոլեջում ներկայացվում է տնօրենի հաշվետվություն՝ հիմնված ստորաբաժանումների ներկայացրած տարեկան հաշվետվությունների և տվյալների վրա, ինչը կարող է նպաստել գործունեության ընդհանուր պատկերի ձևավորմանը։ Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ տնօրենի հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը նպատակահարմար է վերանայել՝ այն դարձնելով առավել վերլուծական, համահունչ Ռազմավարական ծրագրի նպատակներին, խնդիրներին և ցուցիչներին։ Նման մոտեցումը կնպաստի ՌԾ-ի իրականացման ընթացքի համապարփակ գնահատմանը, ձեռքբերումների վերհանմանը, ինչպես նաև կառավարման որոշումների կայացման արդյունավետության բարձրացմանը։

Դրական է, որ Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջը ապահովում է իր գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը հասարակության նկատմամբ՝ տեղեկատվության մատչելիությունն ապահովելով ինչպես պաշտոնական կայքի, այնպես էլ սոցիալական մեդիայի հարթակների միջոցով: Գովելի են նաև հանրությանն ուղղված նախաձեռնությունները հասարակական հիմունքներով աջակցություն ցուցաբերելու գործընթացում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջը՝ հանդիսանալով բժշկական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, ունի առանձնահատուկ նշանակություն ոչ միայն մասնագիտական կրթության, այլև հանրային առողջապահական իրազեկման գործում: Այդ համատեքստում, Քոլեջի ուսանողները՝ որպես ապագա բուժաշխատողներ, կարող են հանդես գալ նախաձեռնություններով և դպրոցներում իրականացնել առողջապահական տեղեկատվական արշավներ՝ ուղղված առողջ ապրելակերպի իրազեկմանը: Նման գործունեությունը կնպաստի ինչպես ուսանողների հասարակական պատասխանատվության և մասնագիտական հաղորդակցման հմտությունների ձևավորմանը, այնպես էլ հանրային առողջապահական գրագիտության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է հաշվետվողականության համակարգ, հաշվետվությունների ձևաչափը որոշակիորեն բարելավվել է՝ ներառելով որոշ վերլուծական տարրեր, ՄՈՒՀ-ն ունի եռալեզու պաշտոնական կայքէջ և սոցիալական էջեր, իրականացվում են նախապատրաստական անվճար դասընթացներ, իրականացվում են կարճաժամկետ դասընթացներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **բավարարում է** չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: ՄԲՔ-ն իր Ռազմավարական ծրագրում որպես նպատակ է սահմանել ընդլայնել ՄՈՒՀ-ի միջազգային ճանաչելիությունը, համագործակցության շրջանակը և ձևաչափերը, ինչպես նաև խթանել շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին: Նշված նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- Մշակել և ներդնել դասախոսական կազմի և ուսանողության շարժունությանը նպաստող մեխանիզմներ:

- Իրականացնել վեբինարներ, կոնֆերանսներ և դասախոսություններ միջազգային գործընկերների հետ՝ առցանց հարթակում։
- Կազմակերպել միջոցառումներ՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով։
- Միջազգային ուսանողների ներգրավման համար իրականացնել կարիքների գնահատում և ձևավորել հստակ միջոցառումների պլան։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները համակարգվում են տնօրենի, հանրային կապերի և ներառականության պատասխանատուի (միջազգային գործընկերների հետ նամակագրության և հաղորդակցության տեսանկյունից) և Պրակտիկայի կազմակերպման, աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի միջազգայնացման կենտրոնի կողմից։ Վերջինիս կազմում ներգրավված են երեք աշխատակիցներ, սակայն գործնականում հիմնական գործառույթները իրականացվում են բաժնի ղեկավարի կողմից, մինչդեռ մյուս երկու աշխատակիցները զբաղվում են Քոլեջի բժշկական տարեգրքի խմբագրական և տպագրական աշխատանքներով։

Արտաքին տեղական կապերի ուղղությամբ ՄՈՒՀ-ն ունի շուրջ 16 գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է ուսանողների պրակտիկաները, ներգրավում է պրակտիկ ոլորտից դասախոսներ, կիրառում է գործատուների բազաները ուսանողների գործնական աշխատանքների իրականացման նպատակով, ինչպես նաև հնարավորություններ է ստեղծում ուսանողների համար կամավորական աշխատանքներում ներգրավվելու համար։ ՄՈՒՀ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են «Ուիգմոր Գրուփ» ՓԲԸ-ն, «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության ազգային կենտրոնը, ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի» գիտատեխնոլոգիական կենտրոնը, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն, «ԱԿԳ ավելի քան դեղատուն» ՓԲԸ-ն և այլ կազմակերպություններ։

Հաստատությունն իր կրթական ծրագրերի շրջանակներում շարունակականության ապահովման տեսանկյունից համագործակցում է շուրջ 5 տեղական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ («Գլաձոր» համալսարան, Եվրասիա միջազգային համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Հայկական ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարան)։ ՄԲՔ-ն որոշակի համագործակցության շրջանակ ունի նաև միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատությունների հետ, դրանց թվում՝ Գավառի պետական բժշկական քոլեջի, Գյումրու պետական բժշկական քոլեջի, «Հայբուսակ» համալսարան ՍՊԸ-ի բազային քոլեջի, համագործակցության շրջանակներում ՄԿՈՒ հաստատություններն իրականացնում է փոխադարձ այցեր, ՄԿԾ-ների բենչմարքինգ։

ՄՈՒՀ-ն ունի որոշակի փորձառություն միջազգայնացման գործընթացում՝ համագործակցելով շուրջ 17 միջազգային ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ։ Մասնավորապես, «Մոսկվայի առողջապահության ստորաբաժանման №6 բժշկական քոլեջի» հետ

կնքված համաձայնագրի շրջանակում Քոլեջը 2017 թվականից սկսած պարբերաբար մասնակցում է նշված հաստատության կազմակերպած բաց միջմարզային կոնֆերանսներին, որոնց արդյունքում ուսանողներն ու դասախոսները ստացել են հավաստագրեր, շնորհակալագրեր: ՄԲՔ-ն համագործակցում է նաև Լատվիայի Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջի հետ, որի շրջանակում 2010 թվականից իրականացվել են մի շարք փոխադարձ այցեր: 2022թ. օգոստոսի 24-ից 31-ը Քոլեջի վարչական և դասախոսական կազմից բաղկացած պատվիրակությունն այցելել է Լատվիա, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Դաուգավպիլս քաղաքի բժշկական քոլեջի հետ՝ գործընկերային հարաբերությունների հետագա զարգացման և խորացման վերաբերյալ: Վերոնշյալ համագործակցության շրջանակում իրականացվել է բենչմարքինգ «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրերի շրջանակներում, բենչմարքինգի արդյունքում ՄՈՒՀ-ը որոշել է ընթացիկ ուսումնական տարվա ավարտին ներդնել ավարտական կուրսային աշխատանքներ՝ որպես պիլոտային ծրագիր:

Քոլեջը Լիտվայի Ուտենայի համալսարանի հետ կնքել է համագործակցության պայմանագիր, որի նպատակը դասախոսական, վարչական կազմի, ուսանողների միջև, կրթական ոլորտում փոխանակման ծրագրերի իրականացումն է: ՄԲՔ-ն համագործակցում է նաև Դաուգավպիլսի բժշկական համալսարանի, Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքի «Բարձրագույն բժշկական քոլեջ»-ի և Տյումենի բժշկական ակադեմիայի հետ: Նշված համագործակցությունների շրջանակում քոլեջի դասախոսները մասնակցում են միջազգային գիտաժողովների, ինչպես նաև իրականացվում են գիտական հրապարակումներ:

ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում նաև «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Այս ուղղությամբ աշխատանքները համակարգվում են հանրային կապերի և ներառականության պատասխանատուի կողմից: Փորձագիտական ահնդիպումներից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ քոլեջը դեռևս գործող ծրագրեր չունի:

Ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզվին տիրապետման մակարդակին, ապա ինքնավերլուծության տվյալների համաձայն՝ ռուսերենին տիրապետում են դասավանդողների և վարչական անձնակազմի 100%-ը, մինչդեռ անգլերենին տիրապետում է դասավանդողների 40%-ը և վարչական աշխատակիցների 50%-ը: Ուսանողների շրջանում ռուսերենի տիրապետումը կազմում է 100%, իսկ անգլերենի՝ 47%: Անհրաժեշտ է նշել, որ տվյալները դուրս չեն բերվել հավաստի մեթոդաբանությամբ և գործիքներով, օրինակ՝ ուսանողների լեզվի իմացությունը չափվել է այնքանով, որ ուսանողները դպրոցում ուսումնասիրել են ռուսերեն առարկան: Անհրաժեշտ է փաստել, որ ՄՈՒՀ-ը քայլեր ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով անգլերեն լեզվի դասընթացներ 2024թ. դեկտեմբեր և 2025թ. հունվար ամիսներին:

Անհրաժեշտ է նշել, որ օտար լեզվի (անգլերեն) իմացության մակարդակի բարձրացման և կրթության շարունակականության ապահովման նպատակով Քոլեջը համագործակցում է Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ: Լեզվական կարողությունների զարգացման նպատակով Հայաստանի ամերիկյան համալսարանը կազմակերպում է անվճար անգլերենի

դասընթացներ՝ հասանելի դարձնելով դրանք բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների և շրջանավարտների համար: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նշված դասընթացներին դիմել է Քոլեջի 5 ուսանող և 6 շրջանավարտ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները դիտարկվում են որպես հաստատության զարգացման առանցքային ուղղություն: ՄՈՒՀ-ն ունի գործընկերային բավարար բազա միջին մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Բացի այդ, վերջինս հետևողականորեն ընդլայնում է գործընկերային ցանցը՝ ուսանողներին ապահովելով գործնական ուսուցման և մասնագիտական աճի նոր հնարավորություններ: Գործընկերային կապերը հնարավորություն են տալիս նաև լրացնել լաբորատոր ենթակառուցվածքների պակասը՝ գործնական պարապմունքներն իրականացնելով գործընկեր կազմակերպություններում, ինչպես նաև ներգրավել գործատու-դասախոսների:

Գովելի է նաև Քոլեջի համագործակցությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որի շրջականերում իրականցվում են ՄԿԾ-ների բենչմարքինգ, փոխայցելություններ և օտար լեզվի հմտությունների զարգացման նախաձեռնություններ, որոնք նպաստում են կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը և ուսանողների փոխանցելի հմտությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջը ներգրավվի միջազգային ծրագրերում, մասնավորապես՝ ERASMUS+ ծրագրերում: Հաշվի առնելով Քոլեջի միջազգային գործընկերների շրջանակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դասախոսական կազմում ընդգրկված են օտար լեզվին, մասնավորապես՝ անգլերենին տիրապետող անձինք, խումբը նշում է, որ առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները նման ծրագրերին մասնակցելու համար: Այսպիսի ծրագրերը կարող են նպաստել ոչ միայն ուսանողների և աշխատակիցների փորձի փոխանակմանը, այլ նաև աջակցել ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացմանը և կրթական գործընթացի միջազգայինացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը՝ ուղղված հիմնական դասախոսական կազմի և ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարելավմանը: Այսպիսի վերապատրաստումների պարբերական իրականացումը կարող է նպաստել անձնակազմի լիարժեք ներգրավումը Քոլեջի միջազգայնացման գործընթացներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ արտաքին կապերն ու միջազգայնացման գործընթացները դիտարկվում են քոլեջի առաջնահերթություններից, նախորդ հավատարմագրումից հետո քոլեջն ընդլայնել է իր գործընկերային շրջանակը՝ համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնք նպաստում են ինչպես ՄԿԾ-ների իրականացմանը, այնպես էլ ռեսուրսների համալրմանն ու փորձի փոխանակմանը, իրականացվում են ներքին վերապատրաստումներ դասախոսական կազմի լեզվի իմացության բարձրացման նպատակով, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարում է** չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2018թ.-ից: ՈԱ գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա: 2022թ-ին Քոլեջի Որակի ապահովման կենտրոնը մշակվել է «Որակի ապահովման ձեռնարկը», որը սահմանում է որակի ապահովման քաղաքականությունը, ՈԱ համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները, ՈԱ համակարգի ընթացակարգերը: Քաղաքականության համաձայն՝ «ՈԱ քաղաքականության նպատակն է բարձրացնել ՄՈՒՀ-ի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը»:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվություններից է եղել ՈԱ գործընթացների հստակ պլանավորման կարևորությունը: ՄՈՒՀ-ը նշված խորհրդատվությունը հաշվի առնելով սկսել է իրականացնել ՈԱ աշխատանքների պլանավորում: Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Որակի ապահովման պատասխանատուի տարեկան պլանում նշված աշխատանքները հիմնականում կենտրոնանում են ուսումնական գործընթացի գնահատման, կարիքների վերհանման, ՄԿԾ վերանայումներին մասնակցության, ՈԱ մեխանիզմների արդյունավետության գնահատման վրա: Նախատեսված են նաև գործողություններ, որոնք ՈԱ պատասխատուի անմիջական գործունեության շրջանակում չէ, ինչպես օրինակ՝ դասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական վերապատրաստումների իրականացում, գործատուների հետ պայմանագրերի վերանայում, վերակնքում, գործատուների շրջանակի ընդլայնում և այլն: Վերը նշված աշխատանքների բազմազանությունը պայմանավորված է եղել նաև նրանով, որ Որակի ապահովման նախկին պատասխանատուն որոշակի ժամանակահատված համատեղել է Ուսումնական գծով փոխտնօրենի և ՈԱ պատասխանատուի գործառույթները: Ներկայումս վերջինս զբաղեցնում է ուսումանկան աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնը, իսկ ՈԱ աշխատանքների իրականացման համար ՄՈՒՀ-ը ընդունել է 2 նոր աշխատակից ամբողջական դրույքներով:

ՈԱ աշխատանքների իրականացման համար ՄՈՒՀ-ը մշակել է աշխատակցի պաշտոնի անձնագիր, վերջինիս ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ սահմանված գործառույթները որոշակիորեն նաև դուրս են ՈԱ աշխատակցի գործառույթներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը նախատեսում է վերանայել ՈԱ պատասխանատուի պաշտոնի անձնագիրը՝ շեշտադրելով հիմնականում տվյալների հավաքագրումը:

Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվում են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների և շրջանավարտների կարիքները: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշ հարցաթերթիկներում (քննական գործընթացից ուսանողների բավարարվածության, Ստորաբաժանումների գործունեության գնահատման, Նախապատրաստական բաժնի դիմորդների կողմից լրացվող դասընթացի գնահատման հարցաթերթիկներ) ներառված հարցերը հիմնականում «այո» կամ «ոչ» պատասխաններ են նախատեսում, և չեն ապահովում հարցերի փոխկապակցվածությունը: Մյուս կողմից, ուսանողների և շրջանավարտների կողմից լրացվող կրթական ծառայությունների գնահատման հարցաթերթիկներում հարցերը բավականին ընդհանրական են և պարունակում են մի քանի բաղադրիչ: Օրինակ, մեկ հարցի շրջանակում ներկայացվում է՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսումնառության մեթոդները (դասավանդվող նյութի մատչելիությունը, որակը, գիտելիքների գնահատման մեթոդները, դասացուցակի հարմարավետությունը) և այլն: Հարցման արդյունքները հնարավորություն չեն տալիս բացահայտելու, թե հիմնականում որ բաղադրիչում է առկա խնդիր: Բացի այդ, հարցերի ձևակերպումները խրթին են և ոչ միշտ կարող են ամբողջական հասկանալի լինել ուսանողների համար: Փորձագիտական խումբը նաև նշում է, որ քոլեջը դեռևս համակարգված ձևով չի իրականացնում հարցումները, ներկայացված հարցումների մեծ մասը 1 անգամ է անցկացվել: Հարցումները ոչ միշտ են իրականացվել շահակիցների լայն ընդգրկմամբ, օրինակ՝ Ուսանողների բավարարվածության հարցմանը մասնակցել են միայն «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների 3-րդ կուրսի ուսանողները, ստորաբաժանումների գործունեության գնահատման հարցմանը մասնակցել են «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության 3-րդ և «Քույրական գործ» մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողները: Հարցումների իրականացման համար հստակ մեթոդաբանություն ներդրված չէ: Հարցումների հիման վրա կատարված վերլուծությունները խորքային չեն և հիմնականում սահմանափակվում են «ընդհանուր առմամբ գոհ են» եզրույթով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ հարցաշարերի ուղղությունները միտված են Քոլեջի ՈԱ քաղաքականությամբ կարևորվող կարիքների վերհանմանը: Հարցումների արդյունքները քննարկվել են քոլեջի ղեկավար կազմի հետ, սակայն դրանց հիման վրա խոշոր խնդիրների վերհանում և հետագա բարելավման քայլեր չեն իրականացվել: Ավելին, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները, դասախոսները, շրջանավարտները հետադարձ արձագանք չեն ստանում հարցումների արդյունքների և դրանցով վերհանված խնդիրների լուծման վերաբերյալ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթիկները ընթացքում վերանայվել են՝ առավել հստակեցնելով հարցերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի ՈԱԿ–ի կողմից կազմակերպվում են քննարկումներ ներքին շահակիցների ներկայացուցիչների հետ, մասնավորապես ուսումնական պլանների քննարկում գործատուների ներկայացրած առաջարկությունների հիման վրա: Արդյունքում առաջարկություններից որոշները հիմք են ընդունվում հետագա պլանավորումներում, օրինակ ժամերի ավելացում կամ նոր առարկայի առանձնացում:

ՈԱ աշխատանքների հիմնական մեխանիզմներ դիտարկվում են հարցումները, երբեմն ուսանողների հետ ֆոկուս խմբային հանդիպումները և դասալսումները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված գործատուների կարծիքների ուսումնասիրությունը և համեմատությունը: Գործատուների կարծիքների հիման վրա իրականացվել են որոշակի փոփոխություններ կրթական ծրագրերում՝ կապված ժամաքանակների փոփոխությունների հետ:

Փորձագիտական խումբը նշում է, որ տվյալների հավքագրման և վերլուծության իրականացման մշակույթը հիմնականում արտահայտվում է ՈԱ կենտրոնում, սակայն այս մշակույթը չի տարածվել բոլոր ստորաբաժանումներում: Դա է փաստում նաև այն, որ ամբիոնների հաշվետվությունները վերլուծական հիմքով չեն իրականացվում: Անհրաժեշտ է նաև փաստել, որ այս խնդրի մասին արձագանքում է նաև ուսումնական հաստատությունը:

2021թ-ին մշակվել է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը»: ՄԲՔ որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն դեռևս չի իրականացվել: ՈԱ գործընթացները գտնվում են հիմնականում իրականացման և գնահատման փուլում: Անհրաժեշտ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել են որոշ հարցաթերթեր, սակայն դրանք դեռևս կրկին վերանայման կարիք ունեն հարցերի ձևակերպման առումով: Անհրաժեշտ է նշել, որ հարցաթերթերի գնահատման և վերանայման մեխանիզմներ առկա չեն:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ձևավորված աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել և ուսումնական գծով տեղակալի կողմից համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնավերլուծությունը, այսուհանդերձ, լայն տարածում չի գտել շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմում ընդգրկված են ներքին շահակիցների ներկայացուցիչները: Գործատուների և շրջանավարտների կարիքները ինքնավերլուծությունում ներառվել է հարցումների արդյունքների վերլուծությամբ և ներկայացմամբ: Չնայած նրան, որ քոլեջն ունի պաշտոնական կայքէջ, սակայն անհրաժեշտ է նշել, որ ՈԱ գործընթացների վերաբերյալ հրապարակումներ՝ ինքնավերլուծություն և ՈԱԿ վերլուծություններ կայքում տեղադրված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից Որակի ապահովման քաղաքականության մշակումը և համապատասխան ձեռնարկի հրապարակումը, ինչը հնարավորություն է տվել կանոնակարգել և հստակեցնել գործընթացները, ինչպես նաև հիմք ստեղծել որակի մշակույթի ձևավորման համար: Դրական է գնահատվում նաև հաստատության պատրաստակամությունը՝ վերանայել Որակի ապահովման կենտրոնի գործառույթներն ու պաշտոնի անձնագրերը, ինչը կնպաստի կենտրոնում աշխատանքների բաշխման հստակեցմանը

և արդյունավետության բարձրացմանը: Այս պատրաստակամությունը հատկապես կարևոր է այն հանգամանքի դիտարկման համատեքստում, որ կենտրոնի ներկայիս գործառույթները բազմազան են և որոշ դեպքերում դուրս են որակի ապահովման շրջանակից, ինչն էլ խոչընդոտում է առաջնային գործունեության արդյունավետ իրականացմանը:

Որակի ապահովման գործընթացներում շահակիցների ընդգրկման ուղղությամբ իրականացվող քայլերը ևս դրական են գնահատվում: Գործատուների կարծիքների վերլուծության հիման վրա կրթական ծրագրերում կատարված փոփոխությունները վկայում են հաստատության պատրաստակամության մասին՝ արժևորելու արտաքին ներդրումը կրթական միջավայրի շարունակական բարելավման գործընթացում: Այս համատեքստում կարևոր է, որ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հաղորդակցությունը շահակիցների հետ լինի շարունակական և պարբերական: Կարևորվում է նաև հետադարձ կապի ապահովումը՝ մասնակիցներին տեղեկացնելով, թե իրենց ներգրավվածությունը ինչպիսի փոփոխությունների և բարելավումների է հանգեցրել, ինչը կնպաստի վստահության ամրապնդմանը և համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող հարցումները, որոնք ուղղված են ՈԱ քաղաքականությամբ սահմանված կարիքների վերհանմանը: Այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ հարցումները դեռևս չեն իրականացվում հստակ մեթոդաբանությամբ, համակարգված և պարբերական ձևով: Արդյունքում, դրանց վերլուծությունները, լինելով ոչ խորքային և հիմնականում սահմանափակվելով գոհունակության մակարդակի ուսումնասիրությամբ, չեն ծառայում որպես հիմնավոր գործիք՝ խնդիրների վերհանման և որոշումների կայացման գործընթացում: Այս պայմաններում հարցաթերթիկների կիրառումը չի հասնում իր նպատակային արդյունավետությանը, և դրանց միջոցով հնարավոր չէ լիարժեքորեն իրագործել որակի քաղաքականության պահանջները: Խումբը հատկապես կարեւորում է, որ հարցման արդյունքները ներկայացվեն շահակիցներին, ինչը կնպաստի գործընթացների թափանցիկությանն ու մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: Միևնույն ժամանակ, կարևորվում է տվյալների հավաքագրման մեխանիզմների բազմազանեցումը՝ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրված վերլուծությունն ապահովելու նպատակով: Բացի այդ, փորձագիտական խումբը շեշտադրում է հարցաշարերի կառուցվածքի, բովանդակության և լեզվական ձևակերպումների վերանայման անհրաժեշտությունը: Ներկայումս կիրառվող հարցաշարերը հաճախ ներառում են մի քանի բաղադրիչ միևնույն հարցում և ունեն բարդ ձևակերպումներ, ինչը կարող է խոչընդոտել շահակիցների կողմից դրանց լիարժեք ընկալումն ու լրացումը: Սա նվազեցնում է տվյալների ճշգրտությունը և սահմանափակում է դրանց վերլուծական արժեքը: Հետևաբար, կարևորվում է, որ հարցաշարերը ձևավորվեն հստակ մեթոդաբանությամբ՝ ապահովելով հարցերի փոխկապակցվածություն, բաղադրիչների տարբերակում և նպատակային տեղեկատվության հավաքագրում: Այս մոտեցումը կնպաստի հարցաշարերի գործնական կիրառման բարելավմանը և որակի ապահովման գործիքակազմի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը նաև ընդգծում է ՈԱ գործընթացների թափանցիկության ապահովման կարևորությունը: Այս առումով, ՄՈՒՀ-ը կարիք ունի ապահովելու որակի ապահովման գործընթացների վերաբերյալ հիմնական փաստաթղթերի՝ այդ թվում ինքնավերլուծության, կարգերի, վերլուծությունների և այլ հիմնարար նյութերի հրապարակումը: Դրանց հասանելիությունն արտաքին և ներքին շահակիցների համար կնպաստի գործընթացների բաց և հաշվետու բնույթի ձևավորմանը, ինչպես նաև կհաղորդի վստահություն հաստատության կողմից իրականացվող ՈԱ քաղաքականության նկատմամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում որակի ապահովման համակարգի ներդնումը մեկնարկել է 2018 թվականին, սակայն այն դեռևս չի ապահովում կառավարչական որոշումների կայացման համար համակողմանի և համապարփակ վերլուծություններ, իրականացվող հարցումները չունեն հստակ պարբերականություն և ընդգրկվածություն, դրանք ուղղված չեն խոշոր խնդիրների վերհանմանը, որակի ապահովման մոտեցումները և վերլուծությունների իրականացումը դեռևս չեն վերածվել աշխատանքի մշակույթի բոլոր ստորաբաժանումներում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **չի բավարարում** չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

_____

Գագիկ Քթրյան
Փորձագիտական խմբի ղեկավար

13-ը հունիսի, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գագիկ Քթրյան- Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս: Ավարտել է ԵՊՀ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, մասնագիտացում՝ թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում (ասպիրանտուրա՝ 2010): Դասախոս՝ ԵՊՀ, Մովսես Խորենացու անվան համալսարան, Հայաստանի եվրոպական համալսարան (2008–մ/այժմ): Որակի ապահովման ստորաբաժանման ղեկավար՝ Մովսես Խորենացու անվան համալսարան (2012–2015), ՀՀ ՊՆ Ռազմավիացիոն համալսարան (2015-2018), Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարան (2024–մ/այժմ): Փորձագետ՝ ՀՀ բուհերի հավատարմագրման գործընթացներում (2015–ներկայում): Մի շարք ղեկավար պաշտոններ՝ ՀՀ ՊՆ տարբեր կառույցներում (2015–2021): ՀՀ ԲՈԿ նախագահի տեղակալ (2021–2023), ժամանակավորապես՝ նախագահի պաշտոնակատար: Մասնակցել է որակի ապահովման, կառավարման և ՆԱՏՕ-ի դասընթացների (Իտալիա, Գերմանիա, Հայաստան): Ունի 6 գիտական հոդված և 3 տպագիր աշխատանք: Տիրապետում է հայերենին, անգլերենին և ռուսերենին:

Նաիրա Արշակյան- ԵՊԲՀ ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս: Ավարտել է ԵՊԲՀ դեղագործական ֆակուլտետը (1990): Դեղատան հիմնադիր–տնօրեն («Իզոլդա և Սերգեյ» ՍՊԸ, 2006–2010): Ավագ փորձագետ՝ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն (2010–2012): Ֆարմացիայի ամբիոնի վարիչ՝ Եվրասիա միջազգային համալսարան (2019–2022): Ունի մասնակցություն գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերում: Մասնակցել է բազմաթիվ տեղական և միջազգային վերապատրաստումների ու գիտաժողովների (ԵՊԲՀ, YSU, Pharmacon, Science Week, Փարիզ և այլն): Հեղինակ է 12 գիտական աշխատանքների ու զեկուցումների: Տիրապետում է հայերենին, անգլերենին և ռուսերենին:

Ասյա Հակոբյան- Հենակետային Բժշկական Քոլեջի Պրակտիկայի բաժնի վարիչ, անատոմիայի եւ պաթոլոգիայի դասախոս: 1982թ.-ին ավարտել է Պետական բժշկական համալսարանը: 2003-2023թթ-ին աշխատել է դասախոս՝ ԵՊՀ-ում, Թերապևտ՝ Գավառի պոլիկլինիկա և հիվանդանոցներ (1983–2003): Մասնակից և խորհրդատու՝ առողջապահական և կրթական միջազգային ծրագրերում (COAF, Համաշխարհային բանկ, ԿՏԲԿ):

Մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում առաջին օգնության կազմակերպման ոլորտում: Տիրապետում է հայերենին, անգլերենին և ռուսերենին:

Արեգ Խալափյան- Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների եւ մասնագիտության կրթական ծրագրերի արտաքին գնահատման փորձագետ:Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագիծ Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին: Տիրապետում է՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	12.03.2025թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում քոլեջի տնօրենի տեղակալների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում հիմնադիրների խորհրդի հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (Հետազոտական աշխատանքների համակարգող, Պրակտիկայի կազմակերպման աշխատանքի տեղավորման և արտաքին կապերի, միջազգայնացման ստորաբաժանում, Հաշվապահ, գրադարանավար, Կադրերի տեսուչ, Հանրային կապերի, ներառական կրթության ապահովման համակարգող)	14:20	15:20	60 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Հանդիպում գործատուների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե

	13.03.2025թ		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Ցիկլային հանձնաժողովների նախագահների հետ		09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի հետ		10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ		11:40	12:30	50 րոպե
4.	Դասալսում		12:40	13:10	30 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ		13:20	14:10	50 րոպե
6.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Դեղագործություն» և «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրերի	14:20	15:10	50 րոպե

		պատասխանատուի և դասախոսների հետ			
7.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Դեղագործություն» և «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրերի ուսանողների հետ (10-12 հոգի)	15:20	16:10	50 րոպե
8.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ		16:20	16:50	30 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:00	19:00	120 րոպե

	14.03.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողութ.
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ՈւԽ-ի հետ	10:30	11:10	40 րոպե
3.	Այց ՄՈՒՀ-ի կողմից կիրառվող բազաներ	11:20	12:20	60 րոպե
4.	Փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:30	13:00	30 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:10	14:10	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	14:20	17:30	200 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ հավատարմագրման բարելավման պլանի կատարողականի վերլուծություն	1
2.	Հիմնադիրների խորհրդի նիստերի արձանագրություններ	2
3.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ (վերջին 3 տարվա)	2
4.	Հաստիքացուցակ (գործողը և դրա նախորդը)	2
5.	Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
6.	Ցիկլային հանձփնաժողովների նիստերի արձանագրություններ	2
7.	Քոլեջի ուսանողների թիվը՝ ըստ ՄԿԾ-ների (այցի ընթացքում)	3
8.	Ուսանողն (առկայության դեպքում) և անհատական աշխատանքների օրինակներ (յուրաքանչյուրից 5-ական)	3
9.	Ուսանողներին տրամադրվող ընթացիկ գործնական առաջադրանքներ	3
10.	Վերջին 3 տարիների ամփոփիչ ատեստավորման հարցաշարեր երեք ՄԿԾ-ների ուղղությամբ	3
11.	Իրականացված բենչմարքինգների վերլուծություններ /Քույրական գործ/	3
12.	Կրթական ծրագրերի փաթեթներ (ուսումնական պլաններ, մոդուլային ծրագրեր) 3 ՄԿԾ-ների համար	3
13.	Պրակտիկայի օրագրերի լրացված օրինակներ բոլոր ՄԿԾ-ների համար (5-ական օրինակ)	3
14.	Քննությունների և ստուգարքների գնահատման և բողոքարկման կանոնակարգ	3
15.	Կուրսային աշխատանքերի թեմաներ	3
16.	Ավարտական աշխատանք գրելու ուղեցույց	3
17.	ՈւԽ տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	4
18.	Վերջին 3 տարվա Կարիերայի, շխատանքի տեղավորման, արտաքին կապերի միջազգայնացման բաժնի պլաններ և հաշվետվություն (վերջին երեք տարիների)	4
19.	ՈւԽ աշխատանքային պլաններ, հաշվետվություններ, նիստերի արձանագրություններ	4
20.	Շրջանավաարտների քանակ վերջին 4 տարվա համար	4
21.	Կարիերայի կողմից հավաքագրված բազան և վերլուծությունը շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ (վերջին 3 տարիների համար)	4

22.	Ուսանողների ցանկ, որոնք ՄՈՒՀ-ի կողմից ստանում են կրթաթոշակներ կամ ֆինանսական աջակցություն	4
23.	Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ , մրցութային կարգով ընդունվող դասախոսին ներկայացվող հարցաշարեր	5
24.	Վերջին երեք տարում նոր ընդունված դասախոսական կազմ	5
25.	Վիճակագրական տվյալներ՝ պրակտիկ մասնագետների քանակ, ուսանող-դասախոսների քանակ	5
26.	Վարչական կազմի քանակ	5
27.	Դասալսումների ժամանակացույց, ձևաթերթեր, վերլուծություններ տարբեր ամբիոններից	5
28.	ՊԴ գնահատման հարցաշարեր, վերլուծություններ վերջին 3 տարվա	5
29.	Վերջին 2 տարվա ընթացքում խրախուսված դասախոսների ցանկ, խրախուսման ձև	5
30.	Քոլեջի նախաձեռնությամբ Մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ անցած դասախոսական կազմ՝ անուն ազգանուն, դասավանդող մոդուլներ կամ առարկաներ, վերապատրաստման թեման, վերապատրաստող կազմակերպություն և տարեթիվ	5
31.	Ուսանողների կողմից իրականացված հետազոտական, ստեղծագործական և ինքնուրույն, ռեֆերատիվ աշխատանքներ	6
32.	Դասախոսների կողմից տպագրված մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, հոդվածներ և այլ աշխատանքներ վերջին 4 տարում	6
33.	2024-2025թթ. բյուջե	7
34.	Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող բոլոր հարցումների հարցաշարեր, վերլուծություններ /նախորդ 4 տարիների/	10
35.	ՈԱ պատասխանատուի տարեկան աշխատանքային պլաններ, հաշվետվություններ /նախորդ 4 տարիների/	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Լաբորատորիաներ
3. Սիմուլացիոն սենյակներ
4. Մարզադահլիճ
5. Վարչական սենյակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԳԱՑ -Գնահատման առանցքային ցուցիչներ
2. ԿԳՄՍ -Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3. ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
4. ՄԲՔ-Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ
5. ՄԿԾ- Մասնագիտական կրթական ծրագիր
6. ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն և ուսուցում
7. ՄՈՒՀ -Մասնագիտական ուսումնական հաստատություն
8. ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
9. ՊԴ -պրոֆեսորադասախոսական անձնակազմ
10. ՊԿՉ -Պետական կրթական չափորոշիչ
11. ՌԾ- Ռազմավարական ծրագիր
12. ՈԱԱԿ -Որակի ապահովման ազգային կենտրոն
13. ՈԱՇ -Որակավորումների ազգային շրջանակ
14. ՈԱ- Որակի ապահովում

15. ՍՊՀ- Սահմանափակ կարողությամբ ընկերություն
16. ՈՒԽ- Ուսանողական խորհուրդ
17. ՓԲԸ -Փակ բաժնետիրական ընկերություն